

հայափանի  
տրգչախմբային  
ընկերության  
25 փարին

---

25 летие  
хорового  
общества  
Армении



հայաստանի  
Երգչախմբային  
Ընկերության  
25 փարին

---

25-ի летие  
хорового  
общества  
Армении

ԵՐԵՎԱՆ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» 1988

ЕРЕВАН «СОВЕТАКАН ГРОХ» 1988

Խմբագիր՝ Ա. Սարգսյան

**Մատուրյան է.**

Հայաստանի երգչախմբային ընկերության 25 տարին:  
[Գիրք-ալբոմ]. [Խմբ.՝ Ա. Սարգսյան]. — Եր.: Սո-  
վետ. գրող, 1988. — 108 էջ. նկ.:

Փիբ-ալբոմը ընթերցողներին կլատմի երգչախմբային ընկերության  
հասնինգամյա ստեղծագործական ուղու մասին:

490500000 «24»  
Ծ 705(01) 250 «Տ»

ԳՄԴ 85.244

---

Մեր սովետական հայրենիքի բազմազգ ընտանիքում հայ ժողովուրդն ամենահին մշակույթ ունեցող ժողովուրդներից մեկն է:

Իր գոյության հազարամյակների ընթացքում նա ստեղծել է հարուստ բանահյուսություն ու գրականություն, ինքնատիպ դասական ճարտարապետություն, գեղանկարչություն, քանդակագործություն, թատերական ու կիրառական արվեստ, զարգացրել գիտության բազմաթիվ ճյուղեր: Պայքարելով օտար բռնակալների դեմ, սերունդների կյանքի գնով այդ ամենը նա հասցրել է մեզ՝ մեծարժեք, հնագույն ձեռագիր աշխատությունների, ինչպես նաև պատմական այլ հուշարձանների միջոցով:

Հայ ժողովուրդն ստեղծել ու զարգացրել է նաև երաժշտական հարուստ մշակույթ, որի արմատները գալիս են դարերի խորքից: Այդ են վկայում մեր ժողովրդի հանճարով ստեղծված հազարավոր գեղջկական գողտրիկ երգերը, աշխատանքային, էպիկական-հերոսական, սիրային, քնարական, ծիսական ու կենցաղային բնույթի բազմաթիվ ստեղծագործությունները: Եթե դրանց ավելացնենք նաև միջնադարյան տաղասացների հուզաթաթավ ստեղծագործությունները, հոգևոր երգերն ու մեղեդիները, քաղաքային երաժշտությունն ու գողթան երգիչներից մինչև մեր օրերը հասած հայ գուսանական արվեստի հոյակապ նմուշները, ապա ականերև կդառնան երաժշտական այն մեծ արժեքները, որոնք կերտվել են մեր ստեղծագործ ժողովրդի կողմից:

19-րդ դարի վերջին քառորդի քաղաքական չափազանց բարդ և հայերի համար շատ կողմերով անբարենպաստ իրադրության մեջ զարգացման նոր շրջան թևակոխեցին ինչպես

հայ գեղարվեստական գրականությունը, այնպես էլ արվեստի բոլոր ճյուղերը:

Դա հետևանք էր ուսումնական մեծ ժողովրդի առաջավոր ռեալիստական արվեստի ու գրականության բարերար ազդեցությունը: Ահա այդ բարերար ազդեցության պայմաններում ձևավորվում է մեր ազգային մշակույթը, որի զարգացումը պայմանավորված էր նաև մի կողմից երկրի տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխություններով, իսկ մյուս կողմից՝ հայերի հասարակական-քաղաքական կյանքում ծավալված դասակարգային սուր պայքարով, որն իր արտացոլումը գտավ գրականության և արվեստի բոլոր բնագավառներում:

Հայ ազգային երաժշտական մշակույթի ձևավորման համար կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն այն, որ մեր մի շարք գործիչներ իրենց մասնագիտական երաժշտական կրթությունն ստացան Ռուսաստանում, այլև հատկապես այն, որ ուսական առաջավոր երաժշտական մշակույթի հիմնարար սկզբունքները՝ ժողովրդայնությունը, մարդասիրությունը և ռեալիզմը դարձան ղեկավար սկզբունքներ նաև մեր ազգային երաժշտական մշակույթի համար:

Հայ իրականության մեջ սկիզբ առավ մի լայն շարժում, որի նպատակն էր հայկական ժողովրդական երգերի հայտնաբերումը, ձայնագրումը մշակումն ու պրոպագանդումը:

Այդ շարժման նախաձեռնողներից մեկն էր Կարա-Մուրզան: Նա առաջինն էր, որ լուրջ ուշադրություն դարձրեց ժողովրդական երգերի ու պարերգերի հավաքման, մշակման և սխտեմատիկ պրոպագանդման գործին: Ընդամենի Կարա-Մուրզան առաջ քաշեց մեր երաժշտության մեջ բազմաձայնությունը ներմուծելու և արմատավորելու խնդիրը, որը երաժշտության բնագավառում դարաշրջանի առաջադրած կարևորագույն պահանջն էր և բացառիկ նշանակություն ուներ հայկական երաժշտական մշակույթի հետագա զարգացման գործում: Այդ նպատակին հասնելու համար նա ծավալեց համերգային ամենալայն գործունեություն, կատարեց անգնահատելի գործ լայն զանգվածների իրաժշտական դաստիարակության և քառաձայն երգեցողության ավանդույթ ստեղծելու առումով: Կարա-Մուրզան իրավամբ դարձավ մեր

ազգային երաժշտական մշակույթի զարգացման նոր շրջանի պիոները: Նա, ամենաանբարենպաստ պայմաններում, իրագործեց բեկում դեպի բազմաձայնությունը և ցույց տվեց այն ճշմարիտ ուղին, որով պետք է ընթանար մեր երաժշտական մշակույթի հետագա զարգացումը: Որքան էլ պարզ ու հասարակ լինեի նրա դաշնավորումը, այնուամենայնիվ դա սկիզբն էր, առաջին քայլը, որը կապված էր բազմաթիվ ու բազմատեսակ դժվարությունների հետ: Եվ շնայած այդ դժվարություններին ու արգելքներին, շնայած մշտական նյութական զրկանքներին, նա իր կյանքը նվիրաբերեց այդ նշանակալից գործին:

Կարևոր է նշել նաև, որ Կարա-Մուրզան միայնակ սկսեց այդ գործը և, այնուամենայնիվ, հասավ իր նպատակին՝ քառաձայն երգեցողությունը դարձավ անհրաժեշտություն և արմատավորվեց հայկական երաժշտության մեջ: Իսկ այս հանգամանքը բացառիկ նշանակություն ունեցավ մեր ազգային երաժշտական մշակույթի հետագա զարգացման համար, որովհետև նա պարարտ հող նախապատրաստեց զարգացման ավելի բարձր փուլին անցնելու և երաժշտական նոր դպրոցի հիմնադրման համար, որը վիճակված էր հանճարեղ Կոմիտասին:

19-րդ դարի 2-րդ կեսի հայկական երաժշտության ականավոր դեմքերից է Մակար Եկմալյանը: Նա հիմնավոր կրթություն է ստացել Պետերբուրգի կոնսերվատորիայում: Ավարտելուց հետո մի քանի տարի ղեկավարել է Պետերբուրգի հայկական եկեղեցու երգչախումբը, ապա վերադարձել հայրենիք: Հիմնավորվել է Թիֆլիսում և ստանձնել Ներսիսյան դպրոցի երաժշտության ուսուցչի և երգչախմբի ղեկավարի պարտականությունները: Նա Ներսիսյան դպրոցում իր սաներին սովորեցնում էր եվրոպական նոտագրություն, թեև դպրոցի ծրագրում այն չկար և ղեկավարությունն էլ դեմ էր դրան: Ի պատիվ Եկմալյանի պետք է նշել, որ նա հետևողականորեն պրոպագանդեց եվրոպական նոտագրությունը, և դա, անշուշտ, ունեցավ իր խոշոր դրական նշանակությունը:

Եկմալյանի փառքն ամենից ավելի կապված է Ներսիսյան

դպրոցի երգչախմբի հետ, որը փաստորեն առաջին պրոֆեսիոնալ երգչախումբն էր հայ իրականութեան մեջ և աչքի էր ընկնում կատարողական բարձր մակարդակով: Նա դրան հասել էր տարիների քրտնաջան ու հետևողական աշխատանքով:

Եկամտային ժողովրդական երգերի բազմաթիւ մշակումներն այժմ էլ զարգարում են մեր երգչախմբերի երգացանկը, քանի որ դրանք ստեղծված են մի մարդու ձեռքով, որն իրոք կարողանում էր թափանցել երգերի խորքը և ստեղծել մեն-երգեր ու խմբերգեր, որոնք 19-րդ դարի վերջին քառորդի հայ պրոֆեսիոնալ երաժշտութեան լավագույն նմուշներն են:

Անցյալ դարի 90-ական թվականների և 20-րդ դարի սկզբի հայ իրականութեան մեջ Կոմիտասը դարագլուխ կազմող մեծութունն է: Անգնահատելի է հայ երաժշտութեանը նրա մատուցած ծառայութունը: Ահա թե ինչու, հայ կոմպոզիտորների շարքում Կոմիտասի անունը դարձել է ժողովրդական լայն զանգվածների ամենասիրած անուններից մեկը: Կոմիտասը, որպես իր ժամանակի ականավոր երաժշտական-հասարակական գործիչ, որպես նշանավոր խմբավար ու երգիչ, մանկավարժ ու գիտնական, որպես բազմակողմանիորեն զարգացած և բանիմաց արվեստագետ, իր ողջ ուժերը նվիրեց հարազատ ժողովրդի երաժշտական մշակութի զարգացմանը: Կոմիտասի ստեղծագործական անխոնջ գործունեութեամբ, հայ-երաժշտութեան զարգացման մեջ սկսվեց նոր շրջան:

Մոտ հարյուր տարի սրանից առաջ, մի երջանիկ դիպվածով նա գալիս է էջմիածին և դառնում Գևորգյան ճեմարանի սան: 1883 թվականին, ավարտելով ճեմարանը, ձեռնադրվում է վարդապետ և կոչվում Կոմիտաս: Այդ նույն թվականին էլ նշանակվում է ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ: Նա կազմակերպում է երգչախումբ, ժողովրդական գործիքների նվագախումբ, սկզբնական շրջանում սովորեցնում է հայկական ձայնանիշներ և միաձայն երգեր: Որոշ ժամանակ անց Մայր տաճարում կազմակերպում է բազմաձայն երգչախումբ: Ամբողջ էութեամբ երաժիշտ Կոմիտասին չէր կարող բավարարել այն ամենը, ինչ նա ձեռք էր բերել էջմիածնի ճեմարանում, և ահա 1889 թվականին նա մեկնում է

Թիֆլիս: Այստեղ ներսիսյան դպրոցում գործում էր առաջ-  
նակարգ երգչախումբ, տաղանդավոր խմբավար Մակար  
Եկմալյանի ղեկավարութեամբ: Կոմիտասը հաճախում է ներ-  
սիսյան դպրոցի երգչախմբի պարապմունքներին: Հետագա-  
յում, ինչպես հայտնի է, նա մեկնում է Գերմանիա և ստա-  
նում երաժշտական հիմնավոր կրթություն:

Կոմիտասի մասին խոսելիս անհրաժեշտ է առանձնակի  
ընդգծել նրա խմբավարական գործունեությունը: Հայ ժողո-  
վըրդի երաժշտական մշակույթի հանդեպ տածած խորունկ  
սերը, հարազատ արվեստը պրոպագանդելու մեծ շահագրգռ-  
վածությունը նպաստել են, որ Կոմիտասն ամբողջ կյանքի  
ընթացքում շարունակի զբաղվել խմբավարությամբ:

Կոմիտաս-խմբավարի արտակարգ տաղանդի առաջին  
նշանակալից արգասիքը էջմիածնի ճեմարանի արական  
երգչախումբն էր, մի սքանչելի կոլեկտիվ, որ ստեղծել ու  
դաստիարակել էր ինքը: Նրա երգչախմբերից պետք է հի-  
շատակել «Գուսան» խումբը խումբը: Այդ երգչախմբի մասին  
եղել են շատ բարձր գնահատականներ: Կոմիտասի խմբ-  
ավարական բարձր կարողությունների ապացույցն ա՛յն էր,  
որ նա աշխատում էր ոչ միայն պրոֆեսիոնալ անսամբլների  
հետ, այլև կարողանում էր կարճ ժամկետում նոր երգչա-  
խմբեր ստեղծել, մեծ մասամբ սիրողներից: Այդպիսի երգ-  
չախմբերի հետ Կոմիտասը բազմիցս ելույթներ է ունեցել  
Եվրոպայի, Անդրկովկասի, Եգիպտոսի, Թուրքիայի տարբեր  
քաղաքներում:

Երգչախմբի հետ ունեցած բազմամյա կենդանի ստեղ-  
ծագործական շփումը, վոկալ արվեստի բուն էություն փայ-  
լուն իմացությունը մեծ ազդեցություն են թողել Կոմիտասի  
ստեղծագործությունների վրա: Դրա վկայությունն են կոմ-  
պոզիտորի խմբերգային պարտիտուրները:

Հայ երաժշտության պատմության մեջ Կոմիտասը մտել  
է որպես մեծ արվեստագետ, խմբավար, որը մեր հայրենա-  
կան երգարվեստում և երգեցողական մշակույթում համա-  
ռորեն արմատավորել և զարգացրել է բազմաձայնությունը:

Խմբերգային արվեստի երախտավորների անձնվեր, ան-  
շահախնդիր գործունեությունը վարակիչ օրինակ է եղել հե-  
տագա շրջանի գործիչների համար, որոնք հոգու նվիրու-

մով ծառայեցին խմբերգային արվեստին, իրենց հարուստ փորձը փոխանցելով հաշորդ սերունդներին:

Հայ ժողովրդի մշակույթն աննախընթաց զարգացում ապրեց՝ բարձրագույն աստիճանի հասնելով սովետական իրավակարգում, ինքնուրույն պետականության պայմաններում:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո, արվեստը, մասնավորապես երաժշտությունը, ստացավ նոր բովանդակություն: Սովետական կարգերի պայմաններում ստեղծվեցին նոր գաղափարներով հագեցած երգեր, կազմակերպվեցին բազմաթիվ բանվորական երգչախմբեր, որոնց մեծ նշանակություն էր տալիս Վ. Ի. Լենինը, որպես մասսաների գեղազտական և քաղաքական դաստիարակության նշանակալից օղակի:

Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո, նշանակալից աշխատանք ծավալվեց հայ մշակույթի զարգացման ուղղությամբ: Իրար հետևից կաբմակերպվեցին երաժշտական տարբեր տիպի խմբեր, նաև երգչախմբեր: Ստեղծվեցին նոր հասարակարգի գաղափարն ու կյանքն արտահայտող բազմաթիվ նոր երգեր:

Հանրապետությունում աստիճանաբար պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի սկիզբ էր դրվում: Երբ լիովին պարարտ հող էր նախապատրաստված, դրվեց նաև պրոֆեսիոնալ խմբերգային արվեստի հիմքը:

Հայտնի իրողությունն է, որքան բարձրանում է մարդկանց մակարդակը, այնքան ավելի հեշտությամբ են լուծվում արտադրական, տնտեսական և այլ խնդիրներ: Ուստի պատահական չէ, որ կոմունիստական կուսակցությունը կյանքի զարգացման բոլոր փուլերում հետևողականորեն անդրադարձել է մշակույթի զանազան հարցերին, որոնք անբաժան է համարել տնտեսության զարգացման ամենակարևոր պրոբլեմներից: Դրա լավագույն արտահայտություններից մեկն էլ միութենական կառավարության որոշումն էր՝ հանրապետություններում երգչախմբային ընկերություններ հիմնադրելու մասին:



Երգչախմբային ընկերության ղեկավարությունը: Մ. Մազմանյան, Բ. Ալ-  
բունյան, Է. Մատուռյան

1958 թվականի մայիսի սկիզբն էր: Հայաստանի կուլ-  
տուրայի մինիստրի մոտ խորհրդակցության ենթ հրավիրված  
Թաթուլ Ալթունյանը, Մարտին Մազմանյանը և տողերիս հե-  
ղինակը: Մինիստր Անդրանիկ Շահինյանը մեզ ծանոթաց-  
նում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմանը՝ Հայաստա-

նում երշխամբային ընկերության հիմնադրելու մասին: Սովետական Միության մինիստրների խորհրդում է ընդունվել այդ որոշումը:

Նույն թվականին առաջինը հիմնադրվել էր ՌՍՖՍՀ-ի երգչախմբային ընկերությունը, որի նախագահ էր ընտրվել Սովետական Միության ժողովրդական արտիստ, մեծահամբավ Ա. Վ. Սվեշնիկովը:

Հայաստանի երգչախմբային ընկերության նախագահ ընտրվեց Սովետական Միության ժողովրդական արտիստ, անվանի խմբավար Թ. Ալթունյանը, տեղակալ՝ հանրապետության ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր, խմբավար Մ. Մազմանյանը (իբրև հասարակական պաշտոն): Պատասխանատու քարտուղարի պաշտոնը վստահվեց տողերիս հեղինակին:

Այսպիսով ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1958 թ. ապրիլի 22-ի որոշմամբ սկիզբ առավ Հայաստանի երգչախմբային ընկերության պատմությունը:

Դա երևույթ էր հանրապետության կյանքում և աշխատավորության մեջ բազմաձայն երգեցողության տարածմանը նպաստելու, առհասարակ նրա գեղագիտական դաստիարակությանը զարկ տալու խնդիրների նկատմամբ կառավարության հոգատարության լավագույն ապացույցներից էր:

Հայաստանի երգչախմբային ընկերության առջև դժվարին խնդիրներ դրվեցին: Նախ՝ ընկերությունը փաստորեն չունեի որևէ նախօրինակ: Ռուսաստանյան ֆեդերացիայի երգչախմբային ընկերությունը՝ անդրանիկը նմանատիպ կազմակերպություններից, նույնպես կազմավորման շրջանում էր: Բացի դրանից, իրապես օգտակար գործ սկսելու համար հարկավոր էին ֆինանսական բազա, նյութական միջոցներ: Այդպիսիք չկային: Ինչպես հայտնի է հասարակական կազմակերպությունները պետական բյուջեից չեն ֆինանսավորվում:

Կառավարության որոշման հետ ստացանք նաև ընկերության հիմնադիր անդամ հիմնարկությունների ու ձեռնարկությունների ցանկը, որոնց միանվագ մուծումներից պետք է ստեղծվեր ընկերության դրամազուլուրը:

Համաձայն ընդունված և հաստատված կանոնադրության՝

Երգչախմբային ընկերությունն իր գործունեությունը հետագայում պետք է ծավալեր սեփական միջոցների հաշվին՝ այսինքն պետք է ստեղծեր իր արտադրական և առևտրական ձեռնարկությունները:

Երգչախմբային ընկերությունը շուներ նաև իր սեփական շենքը: Սկզբում օգտվում էր Հայֆիլհարմոնիայի հյուրընկալությունից: Ընկերությանը հատկացվեց մի անկյուն Հայֆիլհարմոնիայի՝ այժմ Ա. Խաչատրյանի անունը կրող Մեծ դահլիճի առաջին հարկում, բառացիորեն ապակյա մի վանդակ: Շուտով կուլտուրայի մինիստրությունը մեզ հատկացրեց Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի առաջին հարկի ձախ մուտքի երկայնքով տեղադրված երկու փոքր սենյակները: Այստեղ մենք «բնակվեցինք» մինչև 1971 թվականը:

Ընկերության աշխատանքները գլխավորելու համար ստեղծված էր կազմկոմիտե, որը գործեց մինչև Ընկերության առաջին հիմնադիր համագումարը, այսինքն՝ 1962 թվականը:

1958 թվականի հոկտեմբերի 24-ին Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճը լեփ-լեցուն էր երաժշտասերներով ու երաժշտական գործիչներով: Նրանց բոլորին միավորել էր այդ օրվա իրադարձության բացառիկ նշանակությունը: Առաջին անգամ հայ իրականության մեջ փաստ էր դառնում մշտական մի կազմակերպության գոյությունը, որն իր հովանու տակ էր առնում ազգային խմբական երգը:

Հուզիչ էր հատկապես այն պարագան, որ հայերն առաջինն արձագանքեցին նման մշակութային նախաձեռնության: Ռուսաստանյան Երգչախմբային ընկերության հիմնադրումից չէր անցել մի քանի ամիս և արդեն ծնվում էր հայկական Երգչախմբային ընկերությունը:

Երեկոն բացեց Թաթուլ Ալթունյանը: Նա ազդարարեց հայ երաժշտական մշակույթի այդ աննախընթաց իրադրության կարևորությունը:

Երեկոյի երկրորդ բաժնում ելույթներ ունեցան մայրաքաղաքի թե՛ պրոֆեսիոնալ, թե՛ ինքնագործ կոլեկտիվները: Ամենից առաջ՝ Հայաստանի պետական կապելլան, որը ղեկավարում էր ալեզարդ Արամ Տեր-Հովհաննիսյանը, Հայէլեկտրագործարանի տղամարդկանց երգչախումբը՝ Նուբար

Մեկը՝ Յանի ղեկավարութեամբ: Ելույթ ունեցան նաև երիտա-  
սարդներ: մանուկներ, և. Աբովյանի անվան Հայկական  
մանկավարժական ինստիտուտի վոկալանսամբը՝ Մ. Մես-  
րոպյանի ղեկավարութեամբ, Լուսաշխի տան երգչախումբը՝  
Կ. Կարապետյանի ղեկավարութեամբ, Բելինսկու անվան  
դպրոցի երգչախումբը՝ Հ. Վերանյանի ղեկավարութեամբ,  
Շահումյանի անվան դպրոցի երգչախումբը՝ Գ. Սանդալյանի  
ղեկավարութեամբ և այլն:

Երեկոն արտակարգ ջերմութեամբ էր համակել բոլորին:  
Մարդիկ իրար շնորհավորում էին այնքան սրտաբուխ, կար-  
ծես նրանց կենսագրութեանն անմիջականորեն առնչվող դեպք  
էր կատարվել: Եվ իրոք, ո՞ր հայ արվեստասերը կարող էր  
անտարբեր մնալ...

1958 թ. նոյեմբերին, նույնպիսի հանդիսավոր երեկո տե-  
ղի ունեցավ Երևանի արտադրական խոշոր ձեռնարկութուն-  
ներից մեկում՝ Կիրովի անվ. սինթետիկ կաուչուկի գործարա-  
նում: Երեկոն անցավ բարձր մակարդակով:

Գործարանի ղեկավարութունը (գործարանը ընկերության  
հիմնադիր անդամ էր) ցանկութուն հայտնեց իրենց  
մոտ երգչախումբ կազմակերպել: Ես այդ հիմնադիր ժո-  
ղովին մասնակցել չկարողացա, հիվանդության պատճառով:  
Օրեր անց Ալթունյանը խնդրեց անհապաղ գնալ գործարան  
և զբաղվել երգչախմբի կազմակերպման հարցերով: Ես կրտ-  
րականապես հրաժարվեցի և նրա հարցադրումներին ի պա-  
տասխան՝ պատմեցի զխոսված անցած մի դեպքի մասին:

...1951 թվականն էր: Կոմպոզիտոր Գայանե Չեբոտար-  
յանը առաջարկել էր ինձ Կիրովի գործարանում երգչախումբ  
կազմակերպել, որի խնդրանքով իրեն էին դիմել: Չնայած  
այդ ժամանակ ես պետական կապելլայի դիրիժոր-խմբավարն  
էի, սակայն դեռ կոնսերվատորիայի ուսանող էի և շատ ուրա-  
խացա, որ ինձ համար ինքնուրույն աշխատանքի հնարավոր-  
ութիւն է ստեղծվում: Ներկայացա գործարան: Ղեկավար-  
ութիւնն ամեն ինչ արեց, որպեսզի նորմալ գործունեութեան  
հնարավորութիւններ ստեղծվեն: Կատարեցի ձայների ընտ-  
րութիւն և սկսեցի պարապել խմբի հետ: Երգչախումբը  
հիմնականում բաղկացած էր ինժեներատեխնիկական անձ-  
նակազմից: Փորձի էին գալիս աշխատանքից անմիջապէս

հետո, շատ ժամանակ նույնիսկ առանց աշխատազգեստը փոխելու: Մասնակիցներից ոչ մեկը երաժշտական տարրական կրթություն անգամ չուներ: Ինչպես իրենց, այնպես էլ ինձ համար շահագանց աշխատատար էր հաղթահարել վոկալ երգչախմբային ուսուցման դժվարությունները:

Մի օր էլ փորձի կեսին երգչախմբի անդամներից մեկը (հետագայում մեր հանրապետության պետական անվանի գործիչներից), տեղից վեր կացավ և ամենայն լրջությամբ հայտարարեց.

— Ընկեր Մատուրյան, արի դու երգիր, մենք էլ հաճույքով լսենք... Մեզանից երգող դուրս չի գա...

Ես շփոթահար դահլիճից դուրս փախա ու այլևս գործարան չգնացի:

Ալթունյանը մի կուշտ ծիծաղեց, սակայն մնաց անդրդվելի: Հարկադրված էի գնալ: Ամենահետաքրքիրն այն էր, որ այդ նախկին «երգիչն» էր ընկերության հիմնադիր ժողովի ժամանակ առաջարկել իրենց գործարանում էլ իմ դեկավարությունը երգչախումբ ունենալ: Եվ ահա, 1958 թվականի մարտից սկսեց գործել կիրովցիների ինքնագործ երգչախումբը, որը շարունակեց իր բեղմնավոր գործունեությունը մինչև 1963 թվականը:

Հայկական երգչախմբային ընկերության ստեղծման տարելեցի օրը՝ 1959 թվականի ապրիլի 22-ին, հիմնադրվեց Ընկերության Լենինականի բաժանմունքը, որի նախագահ ընտրվեց ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Ազատ Շիրջանը, իսկ պատասխանատու քարտուղար՝ ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Քնարիկ Երանոսյանը:

Երկու ամիս անց նույնպիսի բաժանմունք հիմնադրվեց Կիրովականում, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Էդուարդ Կզարթվյանի նախագահությամբ:

Ընկերության առջև ծառայող խնդիրները հետզհետե բազմաձևում էին: Մանավանդ կանոնադրության պահանջները ընդարձակ էին և աշխատատար: Ամենից առաջ՝ նպաստել հանրապետության բնակչության, հատկապես աշխատավոր երիտասարդության և ուսանողության բազմաձայն երգեցողական մշակույթի բարձրացմանը և, իհարկե, ամենից առաջ՝ մատաղ սերնդի երաժշտական դաստիարակությանը:

Այդ կապակցութեամբ անհրաժեշտ էր լայն, սերտ համագործակցութիւն սկսել ու ծավալել հանրապետութեան կուստուրայի ու լուսավորութեան միջնորդութեան միջոցներով և կոմպոզիտորներով միութեան հետ: Երաժիշտ-ստեղծագործողների հետ մեկտեղ հարկ էր ուղիներ փնտրել խմբերգային գրականութեանը զարկ տալու համար:

1959 թվականի մայիսի 25-ին կայացավ Հայաստանի երգչախմբային ընկերութեան, ՀՍՍՀ լուսավորութեան միջնորդութեան ղեկավար մարմինների և Հայաստանի կոմպոզիտորների միութեան նախագահութեան համատեղ նիստը, որտեղ քննարկվեցին մասսայական դպրոցներում երգ-երաժշտութեան դասավանդման, նրա որակի բարձրացման հետ առնչվող բազմաթիվ հարցեր: Երաժշտութեան դասավանդման դրվածքը նախապէս բազմակողմանիորեն ուսումնասիրվել էր մայրաքաղաքի և հանրապետութեան մի շարք դպրոցներում: Այդ նպատակով հավաքագրվել էին մի խումբ մասնագետներ, որոնք ամենայն բարեխղճութեամբ կատարեցին հանձնարարութիւնը: Մշակվել էր միջոցառումների ընդարձակ պլան: Հիմնվելով նրանց դիտարկումների վրա՝ 1959 թ. սեպտեմբերի 9-ին, նույն հարցերը քննարկվեցին Հայաստանի երգչախմբային ընկերութեան նախագահութեան և կոմպոզիտորների միութեան վարչութեան համատեղ նիստում: Այստեղ կազմվեց միջոցառումների նոր պլան, հատկապէս մանկական երգեր և խմբերգեր ստեղծելու մասին:

Այդ ասպարեզում ծրագրված գործունեութեան առաջին արդյունքներից էին նույն տարին կազմակերպված երգ-երաժշտութեան ուսուցիչների սեմինար պարապմունքները, համերգ-դասախոսութիւնները, համերգները, որոնց սիրով մասնակցում էին հանրապետութեան երաժշտական արվեստի բազմաթիվ ականավոր գործիչներ:

Խմբերգային արվեստը աշխատավորական զանգվածների սեփականութիւնը դարձնելու նպատակով, ընկերութիւններով գոյութեան առաջին իսկ տարին համակողմանի գործունեութիւն ծավալեց, սակայն նրա ամենաառաջնահերթ խընդիրը նոր երգչախմբերի կազմակերպումն էր:

Մինչև Հայաստանի երգչախմբային ընկերութեան հիմնա-

դրումը, հանրապետությունում կային կայուն գործող մի քանի երգչախմբեր, որոնք ժամանակին զգալի աշխատանք կատարեցին խմբերգային արվեստի ասպարեզում: Դրանցից են՝ Երևանի ուսուցչի տան երգչախումբը, Լենինականի ուսուցչի տան երգչախումբը, Երևանի պետական համալսարանի երգչախումբը, Երևանի պրոֆտեխուսուցման կոմիտեի մշակույթի տան երգի-պարի անսամբլը, Լենինականի Սևյանի անվ. մշակույթի տան երգի-պարի անսամբլը, Երևանի ավտոդողերի գործարանի երգի-պարի անսամբլը և այլն:

Երևանի ուսուցչի տան երգչախմբի հետ երկար տարիներ բեղմնավոր աշխատանք կատարեց կոմպոզիտոր Դանիել Ղազարյանը: Սակայն խմբի գեղարվեստական վերելքի տարիներ եղան 1941—1948 թվականները, երբ նրա գեղարվեստական ղեկավարությունը հանձնարարվեց ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Մարտին Մազմանյանին: Երգչախումբը 1945 թ. հարյուր քսան հոգանոց կազմով մասնակցեց Մոսկվայում կայացած ինքնագործ երգչախմբերի օլիմպիադային և արժանացավ առաջին կարգի մրցանակի: Հետագա տարիներին երգչախումբը ղեկավարեց խմբերգային արվեստի հմուտ վարպետ Կարո Կարապետյանը, ապա նաև Նովհաննես Վերանյանը: Վերջին 15 տարիներին երգչախմբի գեղարվեստական ղեկավարն է հմուտ խմբավար Լուիզա Զեյթաղյանը:

Հնագույն երգչախմբերից է Լենինականի ուսուցչի տան երգչախումբը, որի կազմակերպիչն է եղել Մ. Թամիրյանը: Խմբի հետ բեղմնավոր ու օգտակար աշխատանք է կատարել կոմպոզիտոր Վահան Ումր-Շատը: Երկար տարիներ խմբի աշխատանքները գլխավորեց ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Քնարիկ Երանոսյանը: Նրա ղեկավարությամբ երգչախումբը ձեռք բերեց ակնառու հաջողություններ:

Հանրապետության առաջատար երգչախմբերից էր Երևանի պետական համալսարանի երգչախումբը, որի հետ տարբեր տարիներին ընթացքում աշխատել են խմբերգային արվեստի անվանի վարպետներ Թաթուլ Ալթունյանը և Կարո Զաքարյանը: Խումբը մի տեական շրջան աշխատեց անվանի խմբավար, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Կարո Կարապետյանի ղեկավարությամբ: Այդ շրջանում երգչախումբը

ձեռք բերեց լայն հասարակական ճանաչում: Նա համամիութենական և հանրապետական մի շարք ստուգատեսներում մշտապես գտնվում էր առաջին տեղերում: Այնուհետև, երգչախմբի աշխատանքները մի քանի տարի մեծ հաջողությամբ գլխավորեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Զեբիջյանը:

Երկար տարիներ իր ունկնդիրներին գեղագիտական մեծ հաճույք պատճառեց պրոֆեսորուսուցման պետական կոմիտեի մշակույթի պալատի երգի-պարի անսամբլը՝ Երվանդ Սահառունու ղեկավարությամբ: Սահառունուց հետո մի որոշ շրջան խմբի աշխատանքները գլխավորեց ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Զեմա Գյոզալյանը: Ներկայումս անսամբլը պատվով է կրում իր հիմնադիր՝ Երվանդ Սահառունու անունը:

Հետաքրքիր կոլեկտիվ էր Լենինականի Սեյանի անվ. մշակույթի պալատի երգի-պարի անսամբլը՝ շնորհաշատ պարուսույց Ահասի Շաբոյանի ղեկավարությամբ (խմբավար Լ. Աղաջանյան), որը բեղմնավոր աշխատանք կատարեց մի տևական շրջան:

Երիտասարդության գեղագիտական դաստիարակության ասպարեզում քիչ ծառայություն չմատուցեց ևս. Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտի «Ծաղկեփունջ» վոկալ անսամբլը՝ Մ. Մեսրոպյանի ղեկավարությամբ:

Հետաքրքիր երևույթ էր Լենինականի «Պողպատ» արտելի տղամարդկանց երգչախումբը, որը հիմնականում կազմված էր հայրենադարձ բանվորներից:

Երեանի Բելինսկու անվ. դպրոցի կատարողական պրոֆեսիոնալ մակարդակի հասած երգչախումբը շնորհաշատ երաժիշտ Հովհաննես Վերանյանի ղեկավարությամբ, երկար տարիներ իր տեսակի մեջ մնաց առաջինը և իր գեղարվեստական մակարդակով հիացրեց մեր երաժշտասեր հասարակայնությանը: Վերը նշված խմբերից շատերը, որոշ օբյեկտիվ պատճառներով, դեռևս տարիներ առաջ դադարեցին գործելուց:

Այնուամենայնիվ հանրապետությունում կային նաև արվեստ-առիթ ծնվող և թիթևոնիլի կյանք ունեցող խմբեր: Հիմա պետք էր անել ամեն ինչ, որպեսզի ընկերությունն իրեն մատ-

չելի բոլոր միջոցներով նպաստեր գործող երգչախմբերի գոյության կայունացմանը, ինչպես նաև հարաճուն բազմացմանը:

Հազիվ էր լրացել ընկերության մեկ տարին, երբ նրան առևնթեր կազմակերպվեց 100 հոգուց բաղկացած ինքնագործ երգչախումբ, որը շարունակեց իր գոյութունը մինչև 1966 թվականը: Երգչախմբի մասնակիցներից շատերը հետագայում շարունակեցին իրենց կրթութունը երաժշտական ուսումնական հաստատութուններում, ավարտելուց հետո անցան ինքնուրույն աշխատանքի:

Նրանցից շատերը հետագայում աշխատանքի անցան ընկերության արդեն պրոֆեսիոնալ երգչախմբում և շարունակում են աշխատել մինչև օրս, իսկ մի մասն էլ աշխատում են հանրակրթական դպրոցներում, որպես երգ-երաժշտության ուսուցիչներ: Մեր ինքնագործ երգչախմբի ակտիվ մասնակիցներից էր նաև Սեդրակ Տեր-Ղազարյանը, որն այժմ մեր հանրապետության առաջատար խմբավարներից է: Կիրովի անվան գործարանի երգչախումբը, որը կազմակերպվեց 1959թ, կարճ ժամանակում ձեռք բերեց հասարակական լայն ճանաչում, դարձավ հանրապետության խոշոր միջոցառումների ակտիվ մասնակիցը: Հիշում եմ, խմբի առաջին պարամունքներից մեկի ժամանակ տարա պատրաստվող երգի արտազրուած նոտաներ և բաժանեցի ըստ ձայնախումբերի: Բասերի խմբում կար մի երիտասարդ՝ Շալիկո անունով: Նա վերցրեց նոտայի թերթը, մոտեցրեց աչքերին, պտտեց աչ ու ձախ և հարմար համարեց ձեռքին պահել գլխիվայր շրջած:

Ես նրան հարցրի.

— Շալիկո, ինչու՞ եք այդպես բռնել նոտան:

Նա ծիծաղելով պատասխանեց.

— Ընկեր Մատուրյան, մեկ չի՞, բան չեմ հասկանում:

Ինչպես կարող էի առարկել նման անկեղծությանը:

Տարիներ անցան: Փոքրիկ մի երգի վրա էինք աշխատում. ես փորձեցի սովորեցնել լոկ լսողությամբ, առանց նոտաների: Հանկարծ նույն Շալիկոն, նստած տեղից վեր կենալով նոտա պահանջեց:

Ես նրան հիշեցրի գլխիվայր պահած նոտաները: Նա ան-

կեղծությամբ խոստովանեց, որ հիմա, եթե նոտաները ձեռքին չեն լինում, չի կարողանում երգել:

Երաժշտական տարրական գիտելիքներ ձեռք բերելը հետզհետե հնարավորություն տվեց ծրագրում տեղ հատկացնելու լուրջ խմբերգային ստեղծագործությունների: Չուխաջյան՝ խմբերգ «Կարինե» օպերայից, Ա. Հարությունյան՝ «Հայրենիք» կանտատի առաջին մասը, Տուլիկով՝ «Լենին», Կոմիտաս՝ «Անձրև եկավ», Ա. Սաթյան՝ «Լուռ գնա՛յ», Դ. Ղազարյան՝ «Քույր իմ նազելի» և այլն: Կիրովցիների հետ որպես մենակատարներ հանդես էին գալիս նաև պրոֆեսիոնալ արտիստներ և հաճույքով մասնակցում խմբի գործունեությանը:

Հաջորդաբար երգչախմբեր ունեցան Երևանի գյուղատնտեսական և պոլիտեխնիկական ինստիտուտները, երկրորդ մանկական կլինիկական հիվանդանոցը, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի երկրաբանության ինստիտուտը, Երևանի քիմիական տեխնիկումը, Ա. Բակունցի անվան մանկավարժական ուսումնարանը, Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը, Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարանը, Կիրովականի ուսուցչի տունը, Ալավերդու պղնձաքիմիական գործարանի մշակույթի տունը, Ազիզբեկովի մշակույթի տունը, Ղափանի շրջանային մշակույթի տունը և այլն:

Հիմա արդեն հանրապետությունում գոյություն ունեն վեց տասնյակից ավելի երգչախմբեր, որոնցից շատերը հասել են պրոֆեսիոնալ բարձր մակարդակի, իրավունք նվաճել հանդես գալու ոչ միայն Հայաստանի բեմահարթակներում, այլև նրա սահմաններից դուրս, նաև արտասահմանում: Տարբեր քաղաքներում և շրջաններում գործող երգչախմբերից շատերը այժմ դարձել են ինքնուրույն երաժշտական օջախներ, որոնք մեծապես նպաստում են տեղի երաժշտական կյանքի առաջընթացին, զարգացմանը:

Վերևում թվարկված երգչախմբերը (անխտիր բոլորը) գործում են կանոնավոր կերպով, մասնակցում տեղերում կազմակերպվող միջոցառումներին:

Հանրապետության ինքնագործ երգչախմբերից շատերը միութենական և հանրապետական մրցույթի դափնեկիրներ



Հանրապետության մի խումբ խմբավարներ՝ Է. Սահառունու, Կ. Զախարյանի, Թ. Ալրունյանի, Ա. Տեր-Հովհաննիսյանի, Մ. Մազմանյանի հետ

են: Բազմաթիվ երգչախմբեր ունեն «Ժողովրդական կուլեկտիվի» կոչում: Երևանի համար 3 մշակույթի տան երիտասարդական «Հայրեն» երգչախումբը (գեղարվեստական ղեկավար Ս. Տեր-Ղազարյան) 1978 թվականին մասնակցելով Հունգարիայում կայացած երգչախմբերի Բելլա Բարտոկի անվան միջազգային մրցույթին, արժանացավ առաջին մրցանակի և դափնեկրի կոչման: Նույն այդ երգչախումբը կրում է Լենինյան կոմերիտմիության դափնեկրի կոչումը:

Երևանի երիտասարդական կազմակերպությունների կանանց երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Արթուր Վերանյան) լավագույն երգչախմբերից մեկը ճանաչվելով, իրավունք նվաճեց մասնակցելու 1985 թվականին Մոսկվայում կայացած երիտասարդության և ուսանողության համաշխարհային փառատոնին և մեծ հաջողությամբ ցուցադրեց մեր խմբերգային արվեստը: Մի՞թե այս բոլորը այն բանի լավագույն ապացույցը չեն, որ խմբերգային արվեստը մեր հանրապետությունում վերելք է ապրում:

Սովետական կարգերի հաստատումից հետո, ինչպես հայտնի է, աննախընթաց աշխատանք ծավալվեց հայ երա-

ժըշտական մշակույթը բազմակողմանի զարգացնելու նպատակով:

Հանրապետությունում սկիզբ էր դրվում պրոֆեսիոնալ երգարվեստին: Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող մի տասնամյակի ընթացքում արդեն պարարտ հող էր նախապատրաստված, որպեսզի ծնունդ առներ նաև պրոֆեսիոնալ խմբերգային արվեստը: Եվ ահա 1937 թվականին, առաջին անգամ հայ իրականության մեջ, կազմակերպվեց անդրանիկ պետական կապելլան, խմբերգային արվեստի անվանի վարպետ Թաթուլ Ալթունյանի ղեկավարությամբ: Սա խոշոր երեվույթ էր հանրապետության խմբերգային արվեստի պատմության մեջ:

Զնայած 1933 թվականից սկսած Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում գործում էր երգչախումբը հանրապետության վաստակավոր արտիստ Վենիամին Նիկողոսյու ղեկավարությամբ և քիչ դեր չէր խաղում սեփական ժանրի ասպարեզում, սակայն ուրիշ էին կապելլայի (որպես համերգային միավորի) խնդիրները, և նրա կազմակերպումը, իրոք, հանրապետության երաժշտական կյանքում նշանակալից իրադարձություն էր:

1945 թվականին հանրապետությունում կազմակերպվեց մեկ պրոֆեսիոնալ երգչախումբ ևս: Դա հանրապետական ռադիոկոմիտեին կից երգչախումբն էր՝ կարո Ջաքարյանի ղեկավարությամբ, որը ժամանակին մեծ աշխատանք կատարեց հայ խմբերգային արվեստի պրոպագանդան ասպարեզում: Խումբը գործեց մինչև 1953 թվականը:

1940 թվականին հայկական պետական կապելլայի ղեկավարությունը ստանձնեց հայ երաժշտական արվեստի ականավոր ներկայացուցիչ, խմբերգային արվեստի շքեղ և զանցված վարպետ Արամ Տեր-Հովհաննիսյանը: Նրա ձեռքի տակ կապելլան կարճ ժամկետում աննախընթաց վերելք ապրեց: Տարաբախտաբար տեղական շեղով այդ վերելքը՝ Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, և երգչախմբի գրեթե ողջ արական կազմը մեկնեց գործող բանակ: Երգչախումբը շուտով դադարեց գոյություն ունենալուց:

Միայն 1947 թվականին Թ. Ալթունյանը հնարավորություն ստացավ վերականգնելու կապելլայի գործունեությունը:

սակայն երգի-պարի պետական անսամբլում և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում ծայր աստիճան ծանրաբեռնված լինելու պատճառով, շուտով ստիպված էր այն թողնել:

Երբ երգչախումբը շունեք գեղարվեստական ղեկավար, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, դիրիժոր Գևորգ Բուդաղյանի երաշխավորությամբ այնտեղ աշխատանքի հրավիրվեցին իբրև հերթական խմբավարներ, Ջ. Գյոզալյանը և տողերիս հեղինակը: Դա 1949-ին էր: Երկուսս էլ Կոնսերվատորիայի խմբավարական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողներ էինք:

Ջ. Գյոզալյանը 1953-ին փոխադրվեց Երգի-պարի պետական անսամբլ, իսկ ես մինչև 1959 թ. շարունակեցի գործունեությունս կապելլայում:

Թաթուլ Ալթունյանից հետո, կապելլայի գեղարվեստական ղեկավարության համար Մոսկվայից հրավիրվեց խումբավար և և Տումաշևը, հետո նրան փոխարինեց լենինգրադցի դիրիժոր Ավետ Աբգարյանը:

Կապելլան գեղարվեստական պատշաճ մակարդակի բարձրացնելու մտահոգությունը մեզ հանգեցրել էր այն համոզման, որ այդ գործն անպայման պետք է ճշխավորի խումբավարական արվեստի մի մեծ վարպետ, ինչպիսին էր Արամ Տեր-Հովհաննիսյանը: Նա այդ ժամանակ վերադարձել էր Լենինգրադ և ապրում էր այնտեղ: Ինչպե՞ս համոզել, որ ծերունազարդ մասնորոն համաձայնվի տեղափոխվել Երևան: Համարձակություն ունեցա այդ հարցով դիմելու համապատասխան գերատեսչություններին, որպեսզի նրան պատշաճ հրավեր ուղարկվի:

Մինչ այդ ես արդեն նամակ էի գրել մասնորոշին՝ ստանալու նրա համաձայնությունը: Մեր բանակցությունները պսակվեցին լիակատար հաջողությամբ: 1954-ից 1961 թվականը (մինչև կենսաթոշակի անցնելը) Արամ Տեր-Հովհաննիսյանը հայկական կապելլայի գեղարվեստական ղեկավարն էր: Նրանից հետո, մի կարճ շրջան, կապելլայի գեղարվեստական ղեկավարությունը վստահվեց ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Նուբար Սնկրյանին:

Այնուհետև կապելլայի ղեկավարությունն ստանձնեց

արտասահմանից հայրենիք վերադարձած Հովհաննես Չեքիջյանը, որն այժմ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ է, ՍՍՀՄ և ՀՍՍՀ պետական մրցանակների դափնեկիր:

1963 թվականին, անհրաժեշտ պայմաններից դրդված, կապելլան հանձնվեց Հայաստանի երգչախմբային ընկերության տնօրինությանը և մինչև 1966 թվականը շարունակեց մնալ նրա հովանավորության տակ:

Հայաստանի պետական կապելլային առաջադրվող խընդիրները լայն ու բազմազան էին, ուստի նա շէր կարող լինելին ապահովել հայ խմբերգային արվեստի պրոպագանդան գործը: Ընկերության առջև ծառայած հրամայական պահանջ՝ ունենալ սեփական երգչախումբ: Եվ ահա 1966 թվականին, Հայաստանի կառավարության որոշմամբ, հիմնադրվեց Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախումբը՝ երկրորդ պրոֆեսիոնալ երգչախումբը հանրապետությանում: Այս անգամ ևս երգչախմբի հիմնադրի պատիվը պատկանում է ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանին: Երգչախմբի խմբավար նշանակվեց Գրիգոր Սանդալչյանը, կոնցերտմեյստեր, Արամ Կարապետյանը:

Այս իրադարձությունն ուներ երկակի բնույթ: Նոր երգչախմբի կազմակերպումն արդեն իսկ ինքնին դառնում է ստեղծագործական խթանիչ գործոն խմբերգային գրականության հարստացման համար: Եթե որևէ հայ կոմպոզիտոր ներկայացնում էր նոր խմբերգ, առաջին հերթին Երգչախմբային ընկերության խումբն էր կատարում: Սա պակաս կարևոր հանգամանք չէ, քանի որ, կոմպոզիտորները, հատկապես երիտասարդներն իրենց նոր երգերը ունկնդրելու համար ստիպված են լինում սպասել շատ երկար, մույնիսկ տարիներ: Եվ ընկերության երգչախմբի գործի ու հոգատար վերաբերմունքի շնորհիվ բազմաթիվ նոր խմբերգեր կայուն տեղ են գտել հանրապետության պրոֆեսիոնալ և ինքնագործ երգչախմբերի հայտագրերում:

Երգչախումբը վաղուց արդեն վերածվել է յուրօրինակ դարբնոցի, որտեղ իրենց առաջին մկրտությունն են ստացել սկսնակ խմբավարներ Գրիգոր Սանդալչյանը, Դավիթ Զալյանը, Հովհաննես Դարբինյանը, Գրիգոր Նաչարյանը, Հովհաննես Միրզոյանը, Կոմիտաս Քեչիշյանը և ուրիշներ:



Է. Մատուռյանը, Գ. Պողոսյանը, Յ. Բրուտյանը Արամ Տեր-Հովհաննիսյանի հետ

Տարիների ընթացքում այդ նույն երգչախմբում նրանք հնարավորություն են ստացել խորանալու իրենց մասնագիտության մեջ, առավել կատարելագործվելու:

1968 թվականին Թ. Ալթունյանը՝ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում աշխատանքի անցնելու կապակցությամբ, հարկադրված էր թողնել երգչախումբը: Անհրաժեշտ էր ապահովել երգչախումբը հմուտ, փորձառու ղեկավարով:

Հարց բարձրացրինք Լենինգրադից որպես կոնսուլտանտ հրավիրել մեծ վարպետ Արամ Տեր-Հովհաննիսյանին: Երգչախմբի ղեկավարությունն, ընկերության նախագահությունը վստահեց տողերիս հեղինակին: Մեկնեցի Լենինգրադ՝ անձամբ բանակցելու Արամ Տեր-Հովհաննիսյանի հետ: Ինձ հետ էր Ընկերության նախագահության անդամ, արվեստի վաստակավոր գործիչ Զեմս Գյոզալյանը:

Արամ Արտեմիչն ապրում էր քաղաքի «Վասիլևսկի Օստրով» կոչվող հատվածում: Զեմս Գոզալյանի հետ բարձրա-

նում ենք նեղլիկ, մութ աստիճաններով: Մուսյլ տեսք ունեք նրա տունը, և ես սկսեցի քրթմնջալ բարձրաձայն.

— Այ քո տունը շինվի, մեկը հարցնի, թե ի՞նչ ես կորցրել էստեղ: Տուն էլ ունեիր, տեղ էլ: Հանգիստ աշխատում էիր քո հայրենիքում: Ի՞նչ ես հասել էս հեռուները:

Զարմանալի էր. կարծես ի պատասխան իմ մենախոսության՝ վերևից լսեցինք Արամ Արտեմիչի ձայնը.

— Այս ո՞վ է, որ հայերեն է խոսում: Համոզված եմ, որ ինձ մոտ է գալիս:

Մենք բարձրացանք, ողջագուրվեցինք: Երբ տուն մտանք, տեղավորվեցինք, ես հարցրի նրան.

— Մաեստրո, ի՞նչու էիք դուրս եկել սանդղահարթակ:

— Աղջիկ ջան, հանկարծ թվաց, թե մեկն ինձ ձայն է տալիս, և դուրս եկա սենյակից...

Մաեստրոյի գրասեղանին դրված էր բացված հայերեն մի գիրք: Մոտեցա, նայեցի՝ Հակոբ Պարոնյանի «Քաղաքավարության փնապներն» էին:

— Մաեստրո, այս գիրքը ես հազիվ եմ հաղթահարում լեզվի պատճառով, Դուք ինչպե՞ս եք կարդում:

Նա պատասխանեց.

— Ի՞նչ անեմ, աղջիկ ջան, ձեռքս ինչ ընկնում է, կարդում եմ, միայն թե լեզուս շմոռանամ: Շատ դեպքերում ուղղակի ինքս ինձ հետ հայերեն եմ խոսում:

Հարկ չկա բացատրելու, թե ինչ ծանր տպավորություն գործեց նրա խոստովանությունը: Դժվարությամբ ի վերջո կտրեցինք նրա համառությունը և ստացանք Երևան գալու համաձայնությունը:

1968 թ. վերջերին նա վերստին Երևանում էր և աշխատեց ընկերության հրգչախմբի հետ, մինչև իր կյանքի վերջը, որպես կոմսուլտանտ:

Երգչախումբն անմիջապես ձեռնամուխ եղավ նոր համերգային ծրագրի պատրաստմանը, կազմված հայ միջնադարյան տաղերից և շարականներից, որով պետք է մասնակցեր Լեհաստանի Բիդգոշ քաղաքում կայանալիք հնագույն երաժշտության միջազգային փառատոնին: Տաղերը և շարականները խմբագրել և ներդաշնակել էր արվեստի վաստակավոր գործիչ, երաժշտագետ Ռոբերտ Աթայանը, որը



Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախումբը մասնակցում է Էստոնիայի 100-րդ երգի տոնին

նույնպես մասնակցեց փառատոնին և փառատոնի գիտական նստաշրջանում հանդես եկավ «Հայաստանի միջնադարյան երաժշտությունը» զեկուցումով:

Փառատոնի համերգներին իբրև մենակատար մասնակցում էր նաև ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Լուսինե Զաքարյանը:

Թե ինչպե՞ս անցան երգչախմբի համերգները Լեհաստանում, վկայում են լեհական մամուլում լույս տեսած գրախոսականները, որոնցից մեկում ասված է.


«Թե երաժշտական, թե պատմական տեսակետից հետաքրքիր երևույթ էր հայկական վոկալ անսամբլը՝ է. Մատուրյանի ղեկավարությամբ: Հայերը բերել էին մեր դարաշրջանի առաջին հազարամյակի կոմպոզիտորների հնագույն ստեղծագործությունները: («Պոմորցե» հանդես. համար 19/313, Վարշավա):

Լեհական մեկ այլ «Ռուխ Մուզիչնե» պարբերականում (Վար-

շաւա, 1969 թ. 21 նոյեմբերի) հանդիպում ենք հետևյալ տողերին.

«Սեպտեմբերի 17-ի ետկեսօրյա համերգը, որը երկու կեսից էր բաղկացած՝ հայկական և վրացական, իսկապես սենսացիա եղավ: Հայկական վոկալ անսամբլը ղեկավարում էր փորձված դիրիժոր է. Մատուրյանը: Հիանալի պատրաստված երգչախումբը ստույգ և իդեալականորեն հավասարեցված ինտոնացիայով կատարում էր պատարագի մի հետաքրքիր մոնոդիա»:

Անշուշտ, խմբերգային արվեստը և գրականութունը պրոպագանդվում է ոչ միայն ընկերութայան երգչախմբի, այլև հանրապետութունում գործող բազմաթիվ ինքնագործ երգչախմբերի միջոցով, որոնցից շատերն արժանացել են ժողովրդական երգչախմբի կոչման և դրանով իսկ նվաճել նաև բաց համերգներով հանդես գալու իրավունք: Այդ երգչախմբերը զգալի գործ են կատարում հայ և օտարազգի խմբերգային արվեստի պրոպագանդման բնագավառում, և պաստում հանրապետութունում բազմաձայն երգարվեստի տարածմանը: Դրանցից հատկապես պետք է նշել Երևանի երիտասարդական (ղեկ Սեդրակ Տեր-Ղազարյան), Երևանի երիտասարդական կազմակերպութունների կանանց (Արթուր Վերանյան), Երևանի ուսուցչի տան (Լուիզա Զեյթալյան), Գիտութունների ակադեմիայի երկրաբանութայն ինստիտուտի (Կարո Զալիկյան), Կիրովականի երաժշտական դպրոցի (Զոհրաբ Կապլանյան), Լենինականի մանկավարժական ինստիտուտի (Սերգեյ Մացոյան), Լենինականի մանկավարժական ուսումնարանի (Սուրեն Հավունջյան), Երգչախմբային ընկերութայան Արտաշատի բաժանմունքի (Վանյա Քոչարյան), Աշտարակի ուսուցչի տան (Գրիգոր Նաջարյան), էջմիածնի քաղաքային մշակույթի տան (Մարիկա Եդիգարյան), էջմիածնի շրջանային մշակույթի տան (Ռուբեն Ծարբաթյան), Ղափանի երաժշտական ուսումնարանի (Ալեքսեյ Բալայան), Դիլիջանի բժշկական աշխատողների (Վարդան Անանյան), Երևանի Զ-րդ մանկական կլինիկական հիվանդանոցի կանանց (Արգենտինա Պողոսյան), Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի



Հայաստանի երգչախմբային ընկերության պատերազմի վետերանների երգչախմբերը Վ. Ի. Լենինի հուշարձանի մոտ

(Աշոտ Ղափլանյան), Հայէլեկտրագործարանի տղամարդկանց (ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Նուբար Սնկերյան, ներկայումս՝ Կոմիտաս Քեշիշյան), Երևանի համար 6 մշակույթի տան (Արսեն Բաղատով) և ուրիշ երգչախմբերի գործունեությունը: Դրանք տարիներ շարունակ հույժ բեղմնավոր աշխատանք են կատարել՝ արժանի ամենայն խրախուսանքի և ընդօրինակման:

Խոսելով մեր երգչախմբերի ու նրանց ղեկավարների մասին, չենք կարող դրվատանքի խոսք չուղղել նաև ընկերությանը կից գործող աշխատանքի վետերանների երգչախմբի հասցեին, որի հետ շուրջ ութ տարի շարունակ շնորհակալ աշխատանք է կատարում Կլարա Իշխանյանը: Իրավամբ բացառիկ երևույթ պետք է համարել Հայրենական մեծ պատերազմի վետերանների՝ Ղափանի տղամարդկանց երգչախմբի մեծ վաստակը, որը երգչախմբային ընկերության Ղափանի բաժանմունքի հոգատարության և հատկապես խմբի ղեկավար Ա. Բալայանի անձնվիրության արդյունքն է:

Հայաստանի երգչախմբային ընկերության Հայրենական մեծ պատերազմի վետերանների երգչախմբի հետ արդյունավետ և շնորհակալ աշխատանք է կատարում խմբավար Արկադի Ղազարյանը:

Հայկական խմբերգային արվեստի պրոպագանդման առյուծի բաժինն, այնուամենայնիվ պատկանում է երգչախմբային ընկերության երգչախմբին, որն իր բազմազան և հետաքրքիր ծրագրերով վաղուց է արժանացել հրաժշտասեր հասարակայնության ուշադրությանը նաև հանրապետության սահմաններից դուրս:

Երգչախումբն իր ծենդյան պահից՝ 1966 թվականից, սովետահայ կոմպոզիտորների խմբերգերի առաջին կատարողն է, անխոնջ պրոպագանդիստը: Հայաստանի երգչախմբային ընկերությունում տիրող լուրջ ստեղծագործական մթնոլորտի արգասիք են Ալեքսանդր Հարությունյանի «Ձոն Լենինին» և «Բյուրականի տեսիլներ», Էդգար Հովհաննիսյանի «Էրեբունի-Երևան», «Արփա-Սևան», «Հայաստան», «Սարդարապատի քաջեր», Էմին Արիստակեսյանի «Հայոց երգ ու պար», «Երգ եռաձայն», «Հայաստան», «Լենինին», Գևորգ Արմենյանի «Գարնան երգ», «Քնարական», «Հեյ ջան հայրենիք», «Այ աղբյուր», Յուլիա Բեքարյանի «Մարինե վանքում», «Փարվանա», Տիգրան Մանսուրյանի «Ասացվածք հոր համար», «Ասացվածք երգչի համար», Էրիկ Հարությունյանի «Ծս հովիվ լինելի», Ռոբերտ Պետրոսյանի «Արարատի ծեր կատարին» և շատ ու շատ խմբերգեր, որոնք պատվավոր տեղ են գրավում Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախմբի համերգային հայտագրերում:

Սովետահայ կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված երգացանկը հնչել է ոչ միայն Հայաստանի բազմաթիվ համերգասրահներում. նրա հատընտիրն ունկնդրել են նաև Լենինգրադի, Մոսկվայի, Կիևի, Քիշնևի և Տալինի մեր հայրենիքի այլ քաղաքների, ինչպես նաև Բուլղարիայի և Լեհաստանի արվեստագետներն ու արվեստասերները:

Նույն երգչախումբը 1970 թ. մասնակցեց պրոֆեսիոնալ երգչախմբերի՝ Վ. Ի. Լենին 100-ամյակին նվիրված համամիութենական փառատոնին և արժանացավ դափնեկրի կոչման ու ոսկե մեդալի: Ներկայացնենք այդ մրցույթի ժյուրիի



Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախումբը համերգի պահին

անդամներ՝ կոմպոզիտորներ Կ. Օրբելյանի, էդ. Հովհաննիսյանի և Ա. Տերտերյանի հայտնած ընդարձակ կարծիքից փոքրիկ մի հատված:

«Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի վիթխարի գեղարվեստական և պրոպագանդիստական գործունեությունը և մասնավորապես կոլեկտիվի էնտուզիազմը սովետական խմբերգային երաժշտության զարգացման ու պրոպագանդման գործում արժանի են ամենաբարձր գնահատանքի և քաջալերության »:

Ընկերության երգչախումբը իր գոյության տարիների ընթացքում նվաճել է հինգ դիպլոմ և 41 պատվոգիր: Երգչախումբի կատարմամբ բաց են թողնվել հինգ լիամետրաժ ձայնապնակներ, որոնցից մեկը Փարիզում, իսկ համամիութենական ռադիոյի ոսկե ֆոնդում պահվում են նրա կատարմամբ 100-ից ավելի ստեղծագործություններ:

Հիմնադրման օրվանից մինչև այժմ Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի հիմնական նպատակն է եղել նպաստել հանրապետության աշխատավորության գեղագիտական դաստիարակությանը, նրա բազմաձայն երգեցողական մշակույթի բարձրացմանը: Նա սպասարկել է Հայաստանի ամբողջ տարածքի՝ շրջանների ու քաղաքների բազմահազար ունկնդիրներին: Երգչախումբը մեծ հաջողությամբ



Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախումբը Սոփիայում (Բուր  
դարիս)

Հանդես է եկել նաև Ուկրաինայում, Վրաստանում, Ադրբեյ-  
ջանում, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում, Էստո-  
նիայում և այլուր: 1968 թվականին երգչախումբը հրավեր  
ստացավ մասնակցելու Էստոնիայի երգի տոնի 100-ամյակին

նվիրված տոնահանդեսին, և այդ առիթով համերգներով ելույթ ունեցավ «էստոնիա» համերգային դահլիճում:

1970 թվականին երգչախումբը մեծ հաջողությամբ շքր-ջագայեց Բուլղարիայի Սոֆիա, Վառնա, Ռուսե, Պոմորյե, Պլովդիվ քաղաքներում, ամենուրեք արժանանալով բուլղար և բուլղարահայ հանդիսականների ջերմ ընդունելությանը:

Բուլղարական մամուլը բարձր գնահատեց երգչախմբի գեղարվեստական կատարողական մակարդակը:

Ահա այդ համերգների արձագանքներից մի քանիսը միայն. «Ես շաձագանց գոհ եմ, որ ներկա եմ այս համերգին: Երգչախումբը հիրավի հասել է կատարողական մեծ վարպետության: Հայկական երգերը ինձ միշտ հուզել են: Ես սիրում եմ այդ երգերը, իսկ այս երեկո, երգչախմբի հրամուտ կատարումներով, ավելի սիրեցի: էմմա Ծատուրյանը սքանչելի և խելացի խմբավար է, իսկ երգչախումբը ունի շատ քաղցր և նուրբ հնչեղություն:

Ես ապշած եմ Բուլղարական երգերի գերազանց կրկնում եմ՝ շատ գերազանց կատարումով: Պատահում է, որ մեր երգչախմբերն անգամ չեն կարողանում երգել այդպիսի մաքուր բուլղարական առոգանությամբ: Զտեսնված էր, մանավանդ «Քնիթր իմ Դամյանչո»-ն և «Ինչպիսի աղջիկ տեսա, մայրիկ» երգերը: Զերմորեն ողջունե՛լ եմ բոլոր կատարողներին; խմբավարներին, կոնցերտմեստերին այս հաջողության համար և ցանկանում երգչախմբին հասնել կատարողական էլ ավելի բարձր գագաթների»: Այսպես է գրել բուլղարահայ «Երևան» թերթում կոմպոզիտոր, պրոֆեսոր Գեորգի Դիմիտրովը:

«Ռաբոտնիչեսկո դելո» (13 հոկտեմբերի, համար 286) պարբերականում Ստոյան Ստոյանովն իր «Հյուրեր Սովետական Հայաստանից» հոդվածում, անդրադառնալով Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի ելույթին, գրում է նրա պատճառած մեծ հաճույքի, նաև այն մասին, որ համերգը նպաստում է սովետական և բուլղար ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

Սոցիալիստական աշխատանքի հերոս, Բուլղարիայի ժողովրդական արտիստ Բոնչո Բոնչևն իր «Իսկական արվեստի



Հանրապետության մի խումբ խմբավարներ Տալիհնում

կերտողներ» հողվածում գրո մ է. «Նախ և առաջ հաստատվում է հայկական ողջ երգացանկի վառ ազգային խելտոնացիան, ներառյալ և ժամանակակից թեմատիկան («Օղա Լենինին» և «Մարտակոչ»): Բուլղար ժողովրդին առանձնապես հարազատ են մեղեդին զարդարող ֆրազները՝ առկա էրգար Հովհաննիսյանի «Երևան» երգում, որոնք հիշեցնում են էջմիածնի 4-րդ դարի տաճարի ճակատի քարե ժանյակները:

...Համերգի երկրորդ մասի կենտրոնում հայ երաժշտության ամենախոշոր դասական Կոմիտասն էր, որ պաշտամունքի առարկա է, որպես ժողովրդական պատրիարք և կոմպոզիտոր: Կատարվեցին նրա վեց ստեղծագործությունները՝ որոնցից հատկապես՝ «Ինչո՞ւ Բինգյուլը մտար», «Կալի երգն» ու «Գուլթանի Երգը» հիացմունքով ընդունվեցին հասարակության կողմից:

«Գուլթանի Երգն» ունկնդիրների խնդրանքով կրկնվեց: Բուռն ծափերի արժանացան նաև Մակար Եկմալյանի երգե-

րը, հատկապես երաժշտական հարստությամբ այնքան տպավորիչ «Հայր սուրբը»:

Երգչախմբային ընկերության երգչախմբի կենսագրության անմոռաց էջերից մեկը կապված է մեծանուն կոմպոզիտոր, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, լենինյան և Երևանյան մրցանակների դափնեկիր, մեր հանճարեղ հայրենակից Արամ Խաչատրյանի անվան հետ: Մեզ համար պարծառ էր հուշամատյանում կարգով նրա ձևաչափ գրված դրվատանքի այս խոսքերը.

«Արտանց ու ջերմորեն շնորհակալ եմ Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբից և սիրելի էմմա Ծատուրյանից իմ հեղինակային համերգի մասնակցության ու հրաշալի կատարման համար: Ձեր երգչախումբը շատ որակյալ և տաղանդավոր կոլեկտիվ է: Մաղթում եմ նոր և առավել մեծ հաջողություններ:

Ձեր բարեկամ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ:

28-ը դեկտեմբերի 1973 թվականին»:

1974 թվականին երգչախումբը կոմպոզիտորների համամիութենական տան հրավերով մեկնեց Մոսկվա: Մեզ հատկացվել էր այդ տան ընդարձակ սրահը: Երագրում տեղ էին գտել հայ դասականների և սովետահայ կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները: Համերգին ներկա էին ականավոր կոմպոզիտորներ Դմիտրի Կաբալևսկին, Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, ինչպես և բազմաթիվ ռուս և այլազգի կոմպոզիտորներ:

Համերգի ընթացքում իրենց ստեղծագործությունների նվագակցությամբ հանդես եկան Սովետական Միության ժողովրդական արտիստներ Առնո Բաբաջանյանը և Ալեքսանդրը Հարությունյանը:

1976 թվականին, կանանց միջազգային տարվա կապակցությամբ, երգչախումբը տրամադրվեց մի շարք կիոն խումբավարների՝ էմմա Միրզոյան, Կլարա Իշխանյան, Լուիզա Զեյթադյան և Սեդա Ստեփանյան, որոնք հանդես եկան հետաքրքիր ծրագրով:

Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախմբի հետ աշխատելու հնարավորություն է տրվել նաև մի շարք սփյուռ-



Համերգի պահին

քահայ կոմպոզիտորների խմբավարների՝ Ժան Ալմուխյան, Համբարձում Բերբերյան, որոնք հանդես են եկել իրենց ստեղծագործություններից կազմված հեղինակային համերգով:



Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախմբի դիմավորումը Թբիլիսիի կայարանում

Հաջորդ՝ 1977 թվականին երգչախումբը մասնակցեց Թբիլիսիում կայացած «Երաժշտական գարուն» միջոցառմանը և վրացական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի հետ կատարեց Քերուբինի «Ռեքվիեմը» վրացական ՍՍՀ ժողովրդական արտիստ Ջանսուղ Կախիձեի ղեկավարությամբ: Այդ նույն համերգի ընթացքում Օթարի Թաքթաքիշվիլու «Գուրիական երգեր» կանտատը մենք կատարեցինք հեղինակի ղեկավարությամբ: Այս հանդիպումը անվանի երաժշտի հետ երկուստեք այնքան ջերմ զգացմունքներ էր հարուցել, որ նա հարկ համարեց գրավոր արտահայտվել այսպես.

«Երջանիկ եմ այսպիսի հիանալի, եռանդուն և երիտասարդական ավյունով լեցուն կոլեկտիվի հետ հանդես գալուս համար: Բեմի վրա անցկացրած հրաշալի մի քանի ռուպենները երկար կհիշեմ: Նորից ու նորից շնորհակալութուն, մինչև նոր հանդիպում Թբիլիսիում և մեր հայրենիքի այլ քաղաքներում:

Ձեր Օթար Թաքթաքիշվիլի, 14-ը դեկտեմբերի 1977թ.»:

Դրանից հետո, վրացական ֆիլհարմոնիայի դահլիճում

երգչախումբը հանդես եկավ սովետահայ կոմպոզիտորների  
խմբերգերից կազմված մենահամերգով:

Ինչպես միշտ, նրան ուղեկցեց աղմկոտ հաջողություն:  
Համերգներից մեկին ներկա էր ՍՍՀՄ կոմպոզիտորների միու-  
թյան նախագահ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, Լենինյան  
մրցանակի դափնեկիր Տիխոն Խրեննիկովը, որը դրվատանքի  
ջերմ խոսքեր ուղղեց երգչախմբին: Ի դեպ, այդպիսի ջերմ  
արձագանքներ հայ կոմպոզիտորների խմբերգային ստեղ-  
ծագործությունների կատարման առթիվ առաջին անգամ չէ,  
որ մենք ունենդրում էինք:


1978թ. հոկտեմբերին երգչախումբը հրավիրվեց մաս-  
նակցելու եղբայրական Վրաստանում կայանալիք Անդրը-  
կովկասյան երեք հանրապետությունների «Սովետական Ան-  
դրըկովկասի մեղեդիները» երաժշտական փառատոնին:

Այս փառատոնը իրավամբ ժողովուրդների բարեկամու-  
թյան ու եղբայրության տոն էր: Համերգների ծրագրերը հա-  
րուստ էին և բազմապիսի. մասնակցում էին Վրաստանի,  
Ադրբեջանի և Հայաստանի արվեստի վարպետները:

Մեր երգչախումբը վրացական Ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ  
նվագախմբի հետ կատարեց Գևորգ Արմենյանի «Ասք Հա-  
յաստանի մասին» քառամաս կանտատը:

Համերգներ կայացան նաև Թեղավում և Ալավերդի եկե-  
ղեցում:

Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախումբը Ռու-  
սաստանյան Ֆեդերացիայի երգչախմբային ընկերության  
հրավերով եղել է նաև երկրի հնագույն պատմական քաղաք-  
ներում՝ Վլադիմիրում և Սուզդալում, մասնակցել Ս. Տա-  
նևին նվիրված խմբերգային արվեստի համամիութենական  
փառատոնին: Փառատոնից հետո երգչախումբը ելույթներ  
ունեցավ Մոսկվայում և Լենինգրադում, միաժամանակ կա-  
տարելով ֆոնդային ձայնագրություններ համամիութենական  
ռադիոյում: Այժմ երգչախմբի ձայնագրությունների թիվը  
մեկ հարյուրից ավելի է: Դրանցից շատերի կատարողական  
բարձր արվեստը հատուկ նշվել է համամիութենական ռա-  
դիոյի գեղարվեստական խորհրդի կողմից:



Մեր հյուրն է Պոլտավայի բանդուխտների կապիլան

Աշխատավորության գեղագիտական դաստիարակության ներգործուն ձևերից են նաև համերգ-դասախոսությունները և երգերի ուսուցումները: Այդպիսիք հաջողությամբ իրականացրել է երգչախմբային ընկերությունը իր գոյության քառորդ դարի ընթացքում: Դժվար է (և գուցե բոլորովին անհարկի) թվարկել 29 տարվա ընթացքում կազմակերպված համերգների ստույգ քանակը, սակայն ասենք առանց չափազանցանելու, որ դրանք անցկացվել են հանրապետության ամբողջ տարածքում: Հիշատակենք դրանցից մի քանիսը:


Մեծ արձագանք ունեցավ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված համերգ-դասախոսությունների շարքը, որին մասնակցեցին հանրապետության առաջատար ստեղծագործական կոլեկտիվներ, նաև հայ երգի երախտավորներ Շարա Տալյանը, Տաթևիկ Սազանդարյանը, Գլախո Զաքարյանը և ուրիշներ: Նույնպիսի միջոցառումներ կրկնվեցին ինչպես հայֆիլհարմոնիայի դահլիճում, այնպես էլ հանրապետության շատ քաղաքներում:

Մյուս արժանահիշատակ երևույթը «Հայ խմբերգային արվեստի պատմության էջերից» համերգ-դասախոսությունների շարքն էր, որ անցկացվեց հանրապետության շատ շրջաններում: Բոլոր համերգ-դասախոսություններին մասնակցում էր Հայաստանի պետական երգչախումբը, իսկ դասախոսությունները վարում էին մասնագետ երաժշտագետները:

1970 թվականին Սովետական Միության բոլոր ժողովուրդները խանդավառությամբ նշեցին Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը: Այս տոնին իր մասնակցությունը բերեց նաև երգչախմբային ընկերությունը: Հանրապետության բոլոր քաղաքներում և շրջաններում լենինյան թեմաներով կազմակերպվեցին համերգներ, համերգ-դասախոսություններ, անդես եկան ինչպես ընկերության անդամ երգչախմբեր, այնպես էլ մեծ թվով մենակատարներ և տարբեր ժանրի խմբեր: Այդ համերգ-դասախոսությունների ընթացքում հետաքրքիր զեկուցումներ կարգացին հանրապետության անվանի երաժշտագետներ և արվեստաբաններ՝ «Լենինի կերպարը հայ բեմում», «Լենինի կերպարը հայ կերպարվեստում», «Լենինը և երաժշտությունը» թեմաներով: Սրանք բոլորն էլ ամենուրեք ունկնդրվեցին մեծ ուշադրությամբ:

«Հայ խմբերգային արվեստի պատմության էջերից» թեմայով համերգ-դասախոսություններ են անցկացվել 1967 թվականին հանրապետության մի շարք շրջաններում: Կատարողներն են եղել Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախումբը և երաժշտագետ Արմեն Բուդաղյանը:

«Սովետական Հայաստանը 50 տարում» թեմայով համերգ-դասախոսություններ անցկացվեցին Երևանի մետաքսի կոմբինատում, Սևանշին տրեստում, Դիլիջանի «Իմպուլս» գործարանում, Իջևանում, Շամշադինում Կիրովականի քիմիագործների պալատում, Լենինականում, Հրազդանում, Հոկտեմբերյանում, Ապարանում, Թալինում, Վեդիում, Էջմիածնում, Նոյեմբերյանում, Չարենցավանում, Ղափանում, Եղեգնաձորում, Հանքավանում, Կամոյում, Արտաշատում, Աշտարակում և այլ շատ տեղերում: Այս համերգ-դասախոսություններին մասնակցում էին թե պրոֆեսիոնալ և թե ինքնագործ երգչախմբեր: Այս բոլոր միջոցառումների դասախոսն էր երիտասարդ երաժշտագետ Ժաննա Զոհրաբյանը:



Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչխմբի համերգը «Պրավդա»  
թերթի տպարանում

Ընկերության գործունեության կարևոր մասն են կազմում պարբերաբար կազմակերպվող երգչախմբերի փոխայցելությունները, որոնք ստեղծագործաբար իրար հարստացնելու բացի, նշանակալից դեր են խաղում մեր ժողովրդի ինտելեկտուալ կապերի ամրապնդման, տարբեր ազգերի խմբերգային արվեստի փոխժանոթացման ու պրոպագանդման ուղղությամբ:

Ընկերության հիմնադրման օրից, նրա նախաձեռնությամբ ու միջոցներով Հայաստանում հանդես են եկել Լենինգրադի ակադեմիական կապելլան, Մուրավիայի «Դոյնան», Ուկրաինայի «Տրեմբիտան», Վրաստանի և Ադրբեջանի պետական երգչախմբերը, համամիութենական ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի մեծ երգչախումբը և մանկական երգչախումբը, Լենինգրադի Գլինկայի անվան կապել-

լայի տղաների երգչախումբը, Մոսկվայի խմբավարական ուսումնարանի երգչախումբը, Մոսկվայի պետական երգչախումբը, ՍՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի գեղարվեստական դաստիարակության տան մանկական երգչախումբը, էստոնիայի գիտությունների ակադեմիայի տղամարդկանց երգչախումբը, Ուկրաինայի երգչախմբային ընկերության տղամարդկանց երգչախումբը, Պոլտավա քաղաքի բանդուրիստների կապելլան, Լենինգրադի Կապրանովի անվան մշակույթի տան կանանց երգչախումբը, Մոսկվայի «Ալիե պարուսա» ստուդիայի մանկական երգչախումբը, Տալինի պոլիտեխնիկական ինստիտուտի երգչախումբը, էստոնական «Կալեա» երգչախումբը, Լենինգրադի կամերային երգչախումբը, Կիևի պիոներ-դպրոցականների պալատի «Շչեդրիկ» երգչախումբը, Օդեսայի խմբավարական ուսումնարանի մանկական երգչախումբը, Նովոսիբիրսկի կամերային երգչախումբը, Ուկրաինայի հարավ-արևելյան երկաթուղային ճանապարհների մշակույթի տան երգչախումբը, Բաթումի «Օրնանա» վոկալ անսամբլը, Տալինի «Օլեխնա» կամերային երգչախումբը, Ադրբեջանի երգչախմբային ընկերության կամերային երգչախումբը, Մոսկվայի երիտասարդական երգչախումբը:

Արտասահմանյան երկրներից մեզ այցի են եկել Սոֆիայի «Երևան» երգչախումբը, Հունգարիայի Զոլտան Կոդայի անվան երգչախումբը, Սոֆիայի պիոներ-դպրոցականների պալատի «Բողրա սմյանա» երգչախումբը, Սոֆիայի «Դրուժնա պեսեն» երգչախումբը, Սոֆիայի «Կավալ» տղամարդկանց երգչախումբը, Հալեպի «Սպենդիարյան» երգչախումբը և շատ մեծ ու փոքր խմբեր:

Բոլոր հիշատակված խմբերը հանդես են եկել ինչպես Երևանում, այնպես էլ՝ Լենինականում, Կիրովականում, Դիլիջանում, Ղափանում, Քաջարանում, Արտաշատում, Վեդիում, Հրազդանում, Սևանում և այլն:

Բուլղարական «Բողրա սմյանա» մանկական երգչախումբը ՌՍՖՍՀ երգչախմբային ընկերության հյուրն էր:

Հանկարծ զանգ Մոսկվայից: Հեռախոսի մոտ է Մարիա Տոլմաչովան՝ ՌՍՖՍՀ երգչախմբային ընկերության նախագահի տեղակալը: Հայտնեց, որ երգչախմբի ղեկավար, Բուլղար



Աբամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախումբը Տալինում, մասնակցում է էստոնիայի երգի տոնի 100-ամյային

րիայի ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Բոնչո Բոչևը մեծ ցանկություն ունի Հայաստան գալու: Ի՞նչ կաթճիբ ունի այդ առթիվ Հայաստանի երգչախմբային ընկերությունը: Պարզ չէ՞, որ բուլղարական ժողովրդի ներկայացուցիչները մեր ցանկալի հյուրը կլինեն:

Հաջորդ օրն իսկ մեկնեցի Մոսկվա՝ Երևան առաջնորդելու մեր արվեստակիցներին:

Հրաշալի մի խումբ էր դա՝ 80 երեսաներ, որոնց ուղեկցում էին հինգ մանկավարժներ, մի բժիշկ և խմբավար Լիլիանա Բոչևան՝ գեղարվեստական ղեկավար Բոնչո Բոչևի դուստրը:

Բուլղար մանուկների անդրանիկ համերգը տեղի ունեցավ

Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում: Արտասովոր այս երգչախմբին ունկնդրելու էր հավաքվել երաժշտասերների մեծ բազմություն: Երգչախմբի երգացանկը շատ բազմազան էր՝ ժողովրդական անպաճույճ երգերից մինչև բարձր պրոֆեսիոնալ մակարդակի գործեր:

Հաջորդ օրերին փոքրիկ երգիչները հանդիպում ունեցան Երևանի Յավորովի անվան միջնակարգ դպրոցի աշակերտության հետ: Երգչախմբային ընկերությունը կազմակերպեց բաց դաս: Հրավիրված խմբավարներն ու երգ-երաժշտության ուսուցիչները այսպիսով հաղորդակից եղան մանկական երգչախմբային արվեստի աշխատանքային գործընթացներին: Երգչախմբի կատարմամբ Լյուբոմիր Պիպլովի «Քնիր իմ Դամյանչո» երգը ես խնդրեցի մեր բարեկամներից՝ մեր երգչախմբի երգացանկում ունենալու համար:

Մեր փոքրիկ հյուրերը տեղավորված էին նորթի գիշերօթիկ դպրոցում և իրենց հրաշալի էին զգում հովասուն ու գեղատեսիլ բարձունքում: Հասկանալի է, որ նրանք եղան Հաստանի գրեթե բոլոր տեսարժան վայրերում և անշափ գոհ էին իրենց ուղևորությունից, ինչպես շարունակ կրկնում էին հրաժեշտի պահին:

Ավելորդ չէ այստեղ հիշել հետևյալ դեպքը:

Սևանի ափին ենք: Ճաշի ժամանակ նվազախումբը հընչեցրեց պարեղանակ: Պարում էին մեծերը, փոքրերը: Հանկարծ տեղից պոկվեց երգչախմբի ամենափոքրիկ մասնակիցը և զարմանալի արագությունբ յորացնե՞ով հայկական պարի ութման ու պլաստիկ շարժումները, սկսեց պարել, զարմանք ու հաճույք պատճառելով բոլորիս: Կարծես այդ երեխան ի ծնե կատարել էր մեր ազգային պարերը: Աղջնակն այնքան ինքնաբուխ, այնքան նազանքով էր պարում, որ շուտով բոլորը մի կողմ քաշվեցին՝ նրան միայնակ թողնելով դարձան հանդիսատեսներ: Այլևս անկարող էի դիմանալ փոքրիկ արտիստուհու հմայքին, շնորհալի կերպարանքին: Հանեցի թևիս ժամացույցը և կապեցի փոքրիկ պարուհու երկնատարած ձեռքին, որպես փոխհատուցում նրա պատճառած հաճույքի:

Փոխայցելության սկզբունքով Միություն հանրապետությունների շատ քաղաքներում, ինչպես նաև սոցիալիստական



Երգի տոնի պահերից մեկը: Է. Ա. Մատուրյան, Վլ. Ա. Չերնուշենկո, Լենինգրադի Գլինկայի անվան կապելլայի գեղարվեստական ղեկավար

երկրներում իրենց արվեստն են ցուցադրել Հայաստանի լավագույն ինքնագործ երգչախումբերը:

Այսպես, Ուկրաինայում և էստոնիայում մի շարք համերգներով հանդես է եկել Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի երգչախումբը, որը 1966 թվին իր արվեստն է ցուցադրել նաև Լեհաստանում: Վիլնյուս և Կաունաս քաղաքներում ելույթներ է ունեցել Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի երգչախումբը: Լենինգրադ է մեկնել Երևանի ուսուցչի տան երգչախումբը: Մոսկվայում համերգներ է տվել երգչախմբային ընկերության մանկական երգչախումբը: Տալլին է գործուղվել Աշտարակի ուսուցչի տան երգչախումբը, Քիշնևում համերգներով հանդես է եկել Երևանի երիտասարդական երգչախումբը, ընկերության Արտաշատի բաժանմունքի երգչախումբը:

Տարբեր տարիների ընթացքում կիտվայում իր կատարո-

դական արվեստն է ցուցադրել հայէջէկտրագործարանի տղամարդկանց երգչախումբը, Ռիգայում՝ էջմիածնի քաղաքային մշակույթի տան երգչախումբը: Բոլոր քաղաքներում, որտեղ էլ որ հանդես են եկել հայկական երգչախմբերը, պատվով են կատարել իրենց առաքելությունը, բարձր մակարդակով ներկայացրել հայ խմբերգային արվեստը:

Ընկերության հանրագուտ միջոցառումներից են երիտասարդության հետ կազմակերպվող երգերի ուսուցումները: Այդպիսիք իրականացվել են՝ Արտաշատում, Մարտունիում, Արթիկում, Գետաշենում, Ժղանովում, Սևանում, Հրազդանում, Եղեգնաձորում, Կամոյում, Նոյեմբերյանում, Գորիսում, Աղեղբեկովում, Ապարանում, Իջևանում, Վեդիում և ուրիշ շրջաններում ու գյուղերում: Այս միջոցառումների կազմակերպիչները եղել են ընկերության բաժանմունքները: Դրանց համար մենք պարտական ենք խմբավարներ Վ. Անանյանի, Ա. Բալայանի, Վ. Գասպարյանի, Վարդիթեր Գասպարյանի, Մ. Եղիգարյանի, Ե. Ենգոյանի, Ք. Երանոսյանի, Գ. Զալյանի, Լ. Զեյթաղյանի, Է. Էլբակյանի, Կ. Իշխանյանի, Զ. Կապլանյանի, Ս. Հավոնջյանի, Է. Միրզոյանի Գ. Սանդալյանի, Օ. Սիրունյանի, Ս. Ստեփանյանի, Ա. Քեշիշյանի, Բ. Մխիթարյանի և շատ ու շատ ուրիշների ջանքերին, նրանց ստեղծագործական ակտիվությանը:

Հայաստանի երգչախմբային ընկերությունը խոշոր նշանակություն է տվել երգի տոներին՝ որպես աշխատավորության գեղագիտական դաստիարակության ձևերից ամենամասսայականի, և այդ խիստ դժվար միջոցառումը հնարավորին շափ պարբերական դարձնելու համար անշափ շատ ջանքեր է գործադրել: Երգի տոները մեծապես նպաստելով երգչախմբերի կատարողական մակարդակի բարձրացմանը, երգիչ-երգչուհիների երաժշտական-երգեցողական կուլտուրայի հզլմանը, միաժամանակ մշակում են նաև մասնակիցների մեջ կուլեկտիվիզմի զգացում:

Հանրապետությունում երգի տոներ են անցկացվում սկսած 1962 թվականից, երբ առաջին անգամ հայ իրականության մեջ տեղի ունեցավ Երևանի դպրոցականների երգի տոնը՝ Այդ տարվանից սկսած ընկերությունը հետևողական աշխատում է:



Հանրապետական երգի տոնի հյուրեր Վլ. Ա. Չերեուշենկոն (Անհիգրադ) և Ա. Ռատուսասպը (Տալլին) մի խումբ խմբավարների հետ

տանք է ծավալում հանրապետության բազմաթիվ քաղաքներում ու շրջաններում երգի տոներ պարբերաբար անցկացնելու նպատակով: Այդ գործում հարուստ ավանդույթներ ունի Կիրովականը, շնորհիվ հայ երաժշտական արվեստի անխոնջ մշակներից մեկի՝ հանրապետության ժողովրդական արտիստ էդուարդ Կզարթմյանի:

Նրա ջանքերով հիմնավորված հրաշալի նախաձեռնությունը սրբությամբ պահպանում են նրա աշակերտներն ու հետևորդները: Կիրովականը երկու տարի առաջ տոնեց իր 25-րդ երգի տոնը:

Երգի տոների լավ ավանդույթներ ունեն նաև Դիլիջանը, Լենինականը, էջմիածինը, Հոկտեմբերյանը, Ղափանը, Սպիտակը:

1981 թվականին ընկերությունն անցկացրեց իր թվով վեցերորդ հանրապետական երգի տոնը: Սակայն երգի դաշտ շունենալու հանգամանքը խիստ սահմանափակում է այդ միջոցառման հնարավորությունները, հավելյալ դժվարություններ հարուցում: Այնուամենայնիվ, հաղթահարելով բազմա-



Կոմպոզիտոր Յան Ֆրենկելի հետ

թիվ խոշորագույններ, ընկերությունը երգի տոներ է անցկացրել 1969 թվականին Դսեղում՝ նվիրված Հ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին, հաջորդ տարին Լենինականում՝ նվիրված Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին: Վերջին միջոցառման աշխատանքները գլխավորեց ընկերության Լենինականի բաժանմունքը:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակին էին նվիրված Հոկտեմբերյանում, Դիլիջանում, Աշտարակում, Կիրովականում անցկացված երգի տոները: Սպիտակի շրջանի երգի տոնին իրենց մասնակցությունը բերին մի շարք առաջատար խմբեր՝ Երևանից ու Կիրովականից:

Նույն 150-ամյակին էր նվիրված նաև Երևանի գլխավոր պողոտայում կայացած երգի տոնը, որն անցկացվեց ՀԿԿ Երևանի Մյասնիկյանի շրջկոմի հետ համատեղ: 150-ամյակին նվիրված միջոցառումների շարքի բարձր կազմակերպության համար, 1978 թվականի նոյեմբերին, Հայաստանի կրգախմբային ընկերությունը պարգևատրվել է ՌՍՖՍՀ-Գերագույն սովետի պատվոգրով:



ՌՍՅՍՀ-ի երգչախմբային ընկերության նախագահ, ՍՍՀՄ ժող. ար-  
տիստ Վլ. Գ. Սոկոլովը ՌՍՅՍՀ-ի Գերագույն սովետի պատվոգիրն է հանձ-  
նում Հայաստանի երգչախմբային ընկերությանը

Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 60-ամ-  
յակին էին նվիրված Դիլիջանում, Լենինականում, Կիրովա-  
կանում, Սպիտակում, Հոկտեմբերյանում, Ազիզբեկովում  
տեղի ունեցած երգի տոները՝ 3500 մասնակիցների ընդհա-  
նուր թվով: 1981 թվականին Երևանում տեղի ունեցավ հան-  
րապետական մանկական երգի տոն, նվիրված ՍՄԿԿ 26-րդ  
համագումարին և ՀԿԵՄ 60-ամյակին:

Ընկերության կողմից անցկացվող երգչախմբերի ամե-  
նամյա մրցույթները նպաստում են երգչախմբերի թե՛ որա-  
կական և թե՛ քանակական աճին, նրանց կատարողական  
հմտությունների և վոկալ տեխնիկայի բարձրացմանը: Այդ-  
պիսի մրցույթները դարձել են պարբերական, կրկնվում են  
գրեթե ամեն տարի՝ սկսած 1969 թվականից:

Դրանցից առաջինը նվիրված էր Կոմիտասի ծննդյան  
100-ամյակին, երկրորդը հայտարարվեց ՍՍՀՄ կազմավոր-  
ման 50-ամյակի առթիվ, այնուհետև դրանց հաջորդեցին՝  
1973, 1974, 1975, 1977, 1978, 1980, 1981, 1982, 1984 թվա-  
կաններին կազմակերպված մրցույթները:

1969 թվականին անցկացվեց նաև պրոֆեսիոնալ երգչա-



Երգչխմբերի հանրապետական մրցույթի ժյուրին. Ս. Ս. Սաղանդարյան, Ա. Ի. Չաչատրյան, Է. Ա. Մատուռյան, Է. Մ. Միրզոյան, Ռ. Ա. Դավրյան

խմբերի համամիութենական փառատոն՝ նվիրված հոմի-տասի ծննդյան 100-ամյակին, որին մեր հանրապետության երգչխմբերից բացի, մասնակցեցին Լենինգրադի ակադեմիական կապելլան, Մոլդավիայի «Դոյնա» երգչխումբը, Ադրբեջանի պետական կապելլան, Վրաստանի պետական երգչխումբը, Ուկրաինայի «Տրեմբետան»: Փառատոնների օրերին ընկերությունը կազմակերպեց հրավիրված երգչխմբերի հանդիսություններ Հայաստանի աշխատավորական լայն զանգվածների հետ՝ Լենինականի տեքստիլագործների, Կիրովականի քիմիագործների, Երևանի ալյումինագործների, Քաջարանի հանքագործների, Շիրազլու գյուղի կոլտնտեսականների, Երևանի պետական համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողության, Հոկտեմբերյանի շրջանի գյուղական աշխատավորության հետ և այլն:

Ավելորդ է ասել, թե որքան նպաստավոր են նման միջոցառումները Միության ժողովուրդների ինտերնացիոնալ կապերի ամրապնդման համար:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 60-ամյակին

նվիրված ընկերության կողմից հայտարարված երգչախմբերի հանրապետական մրցույթը, որի վերջին փուլին մասնակցող 24 երգչախմբերից 17-ը արժանացան մրցանակային տեղերի:

ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակի առթիվ ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության հետ համատեղ կազմակերպված պրոֆեսիոնալ երգչախմբերի համամիութենական փառատոնին մասնակցելու համար Երևան էին եկել Լենինգրադի ակադեմիական կապելլան, Մոսկվայի համամիութենական ռադիոյի մեծ երգչախումբը, ՌՍՖՍՀ հանրապետական երգչախումբը:

1978 թվականին աշխատավորների ինքնագործ արվեստի փառատոնի երգչախմբերի համամիութենական մրցույթի եզրափակիչ փուլը կայացավ Երևանում:

Այն փաստը, որ մրցույթի աշխատանքների գլխավորումը հանձնարարվել էր Հայաստանի երգչախմբային ընկերության՝ լավագույն ապացույցն է այն բանի, որ խմբերգային արվեստը մեր հանրապետությունում զբաղեցնում է ծանրակշիռ տեղ, և այդ հանգամանքը չի վրիպում միութենական գերատեսչությունների ուշադրությունից:

Մրցույթին մասնակցելու համար Միության տարբեր քաղաքներից Երևան էին ժամանել յոթ երգչախմբեր: Հայաստանից այդ մրցույթին մասնակցելու իրավունք էին նվաճել Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի երգչախումբը է. Ավետյանցի ղեկավարությամբ, նույն կոնսերվատորիայի կանանց երգչախումբը Ի. Վարդանյանի ղեկավարությամբ, Երևանի երիտասարդական կազմակերպությունների երգչախումբը Ա. Վերանյանի ղեկավարությամբ, էջմիածնի քաղաքային մշակույթի տան երգչախումբը Մ. Եղիզարյանի ղեկավարությամբ, նույն քաղաքի շրջանային մշակույթի տան երգչախումբը Ռ. Շարբաթյանի ղեկավարությամբ: Մրցույթի դափնեկրի կոչում ստացան էջմիածնի երկու երգչախմբերը, երիտասարդական կազմակերպությունների երգչախումբը և կոնսերվատորիայի կանանց երգչախումբը:

1980 թվականին ընկերությունը ՀԼԿԵՄ կենտրոնական կոմիտեի հետ համատեղ անցկացրեց «Երիտասարդ ստեղծագործողների հանրապետական փառատոն», որի մաս կազմող


«Երգչախմբային արվեստի օր» միջոցառմանը մասնակցեց Աշտարակի ուսուցչի տան (ղեկ. Գ. Նաչարյան), երիտասարդական կազմակերպությունների (Ա. Վերանյան), էջմիածնի շրջանային մշակույթի տան (Ռ. Շարբաթյան), Երևանի համար 6 մշակույթի տան (Ս. Տեր-Ղազարյան) երգչախմբերը:

Մաքսիմ Գորկին, խոսելով մանկական գրականության մասին, այն միտքն է հայտնել, որ երեխաների համար պետք է գրել այնպես ինչպես մեծերի, բայց ավելի լավ: Ճիշտ այդ նույն սկզբունքով էլ ընկերության աշխատանքները մատաղ սերնդի դաստիարակության ամեն բնագավառում իրականացվել են առավել մեծ ջանքերով ու նվիրվածությամբ:

Աշխատավորության, երիտասարդության, ինչպես նաև մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության ամենահաճելի, ինչպես նաև նպաստավոր ազդակներից են օլիմպիականները, ստուգատեսները, որոնք զգալի տեղ են զբաղեցնում ընկերության աշխատանքում:

Սովետական Հայաստանի 50-ամյակին նվիրված դպրոցական երգչախմբերի հանրապետական մրցույթը, գիշերօթիկ և երկարօրյա դպրոցների ինքնագործ արվեստի հանրապետական օլիմպիական, որ անցկացվեցին Հայաստանի լուսավորության մինիստրության հետ համատեղ, դպրոցական երգչախմբերի և մենակատարների հանրապետական մրցույթը՝ նվիրված ՀԿԵՄ 50-ամյակին, այդ միջոցառումների շարքում, թերևս, ամենահաջողվածներն են եղել:

Ընկերությունը վերջին տարիների ընթացքում անց է կացրել մի շարք ուշագրավ միջոցառումներ, որոնցից է Հայաստանի բազմահազար լսարանի համար հեռուստատեսային հաղորդաշար-համերգաշարը: Երաժշտագետ, պրոֆեսոր Ռոբերտ Աթայանի ներածական խոսքի հետ երգչախումբը հնչեցրեց Քրիստափոր Կարա-Մուրզայի, Մակար Եկմալյանի, Կոմիտասի, Գրիգոր Սյունու, Սպիրիդոն Մելիքյանի, Ռոմանոս Մելիքյանի, Վահան Ումր-Շատի, Դանիել Ղազարյանի, Երվանդ Սահառունու, Կարո Զաքարյանի, Մարտին Մազմանյանի, էդուարդ Կզարթմյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Միքայել Միրզոյանի, Գուրգեն Միրզոյանի բազ-



Մանկական երգչախմբերի հանրապետական մրցույթի ժյուրիի կազմում է կոմպոզիտոր Գ. Ս. Ստրովեն (Մսուկվա)

մաթիվ հանրահայտ խմբերգեր: Այս միջոցառումը, բացի նրանից, որ հարգանքի տուրք է երգարվեստի մեծերի նկատմամբ, միաժամանակ հնարավորություն է տալիս հիշեցնելու այդ բնագավառի երախտավորների, երբեմն հանիրավի մոռացության մատնված ժառանգությունը:

Երգչախմբերի և խմբավարների միջև ստեղծագործական փոխըմբռնումն ավելի լայնացնելու և բազմակերպ դարձնելու առումով չափազանց հետաքրքիր էր ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին նվիրված համերգը, որ տեղի ունեցավ 1982 թ. մայիսի 30-ին Հայհամերգի փոքր դահլիճում: Արամ Տեր-Հովհաննիսյանի անվան երգչախմբի հետ հանդես եկան երկրի ականավոր խմբավարները՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Հովհաննես Չեքիչ-

յանը, Լատվիական ՍՍՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Իմանտ Կոկարսը, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Բորիս Տևլինը, վրացական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Գիվի Բախտաձեն և տողերիս հեղինակը: Հանրապետության մամուլը բարձր գնահատեց իր տեսակի մեջ եզակի այդ միջոցառումը, որ փաստորեն առաջին փորձն էր: Տարբեր խմբավարների համաժամանակյա ելույթները մինչև այդ կիրառում չեն ունեցել Հայաստանում: Նույնպիսի միջոցառում անցկացվեց 1984 թվականին, ընկերության հիմնադրման 25-ամյակին նվիրված:

Այդ համերգին մասնակից խմբավարների կազմը ընդարձակվեց: Բելոռուսիայից հրավիրվեց ԲՍՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Վ. Ռովդոն, էստոնական ՍՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Կոնո Արենդը, Լատվիական ՍՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Գիդո Կոկարսը, Ադրբեջանի երգչախմբային ընկերության նախագահ, Բաքվի կոնսերվատորիայի դոցենտ Լյաման Աթաքիշիևան:

Երգեցողության կուլտուրայի բարձրացման անգնահատելի ձևերից է նաև երիտասարդության և աշակերտության շրջանում անցկացվող երգերի ուսուցումը:

Հանրապետության բազմաթիվ շրջաններում ու գյուղերում պարբերաբար ուսուցվել են ինչպես հայկական ժողովրդական երգեր, այնպես էլ սովետահայ կոմպոզիտորների նույն ժանրի լավագույն ստեղծագործություններ:

Մատաղ սերնդի և երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործում սոցիալիստական հասարակարգում գերակշիռ տեղ է հատկացվում գեղագիտական դաստիարակությանը և բնականաբար՝ երգեցողությանը: Այդ դաստիարակության մեծապես պայմանավորվում է կոմունիզմ կառուցող ապագա քաղաքացու աշխարհայացքի ձևավորումը և գեղարվեստական ճաշակի ձևավորումը:

Այդ անվիճելի ելակետից ելնելով՝ ընկերությունն իր գործունեության բոլոր տարիների ընթացքում բացառիկ ուշադրություն է նվիրել մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության բազմազան ու բազմաթիվ հարցերին:



Հայկական հեռուստատեսությունում: Ընկերության «Բարեկամություն» համերգի մասնակիցներ՝ Իմանտ Կոկարս (Լատվիա), Բոբիս Տեկին (ՌՍՖՍՀ), Գիլի Բախտաձե (Վրաստան)

դրանք համարելով իր առաջնահերթ խնդիրներից գուցե ամենակարևորը:

Այդ առումով կազմակերպվել են հետևյալ կարգի միջոցառումներ՝ երգի տոն, փառատոն, ստուգատես, համերգ, համերգ-դասախոսություն, երաժշտական վիկտորինա, ստեղծագործական գործուղում, մանկական երգչախմբերի փոխալցելություն, երգերի ուսուցում և այլն: Դրանք, անկասկած, դրական արդյունք են տվել: Դպրոցական ու մանկական երգչախմբերի հայտագրերի հարստացմանը նպաստելու նպատակով սիստեմատիկաբար հայտարարվել են մանկական խմբերգերի և մեներգերի մրցանակաբաշխություններ, օժանդակվել նորաստեղծ երգերի կատարմանն ու տարածմանը: Մեծ քանակությամբ նոր ստեղծագործություններ են ձեռք բերվել անհատական պատվերների միջոցով: Դրանցից շատերը ամփոփված են ընկերության կողմից հրատարակված «Մանկական խմբերգերի» ժողովածուներից երկուսում:

Դպրոցականների համար 1968-ից 1974 թվականներին կազմակերպված համերգների թիվն անցնում է մի քանի հարյուրից:



Ինֆևագործ երգչախմբերի հանրապետական մրցույթի մյուսին

Հայաստանի երգչախմբային ընկերությունն ամենալուրջ ուշադրություն է նվիրել երեխաների ձայնի պահպանման խնդիրներին, ինչպես նաև դպրոցական երգչախմբերի ղեկավարների և երգ-երաժշտության ուսուցիչների մասնագիտական մակարդակի բարձրացմանը: Երգ-երաժշտության ուսուցիչների սեմինար են անցկացվել Երևանի Լենինյան, Շահումյանի, Օրջոնիկիձեի, Սպանդարյանի շրջաններում, Լենինականի, Կիրովականի, Դիլիջանի, Ղափանի, Վեդիի, Արտաշատի, Սևանի, Հոկտեմբերյանի և այլ շրջաններում, Սակայն քանի որ դրանք կրում էին ոչ սիստեմատիկ բնույթ, 1972 թվականին ընկերությունը Երևանում կազմակերպեց հանրապետության երգ-երաժշտության ուսուցիչների մշտական գործող սեմինարներ: Սեմինար պարապմունքները տեղի են ունենում տարեկան երեք անգամ՝ դպրոցական արձակուրդների օրերին:

Սեմինար պարապմունքներ վարելու համար պարբերաբար մասնագետներ են հրավիրվել նաև Միության քաղաքներից՝ դոկտոր-պրոֆեսոր Լյուբինսկին (Մոսկվա), որը հանդես է եկել «Երաժշտության դասավանդման մեթոդիկա» թեմայով, Վ. Սոկոլովը (Մոսկվա), Վ. Ջերունշենկոն (Լենինգրադ) «Մանկական ձայնի պահպանման անհրաժեշտությունը և նրա մեթոդները» թեմայով:

Սեմինարների աշխատանքներում ներգրավվել են Հայաստանի անվանի կոմպոզիտորներ, երաժշտագետներ, խմբավարներ, տեսաբաններ, որոնք իրենց փորձն ու գիտելիքները



Հանրապետական մանկական երգի տոն Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի բատրոնի հրապարակում

են փոխանցել ուսուցիչներին, զեկուցումներ կաբդացել մասնագիտական թեմաներով, ծանոթացրել նրանց սեփական ստեղծագործություններին:

Հանրապետությունում գործող երաժշտական դպրոցների թիվն արդեն հարյուրների է հասնում: Մատաղ սերնդի մասնագիտական երաժշտական կրթությունն ապահովող այս հաստատությունների կատարած դրական աշխատանքն անուրանալի է:

Երևանում խմբավարական թեքումով դպրոցի անկախությունն ինքնին դարձյալ գալիս է ապացուցելու, թե որպիսի կարևոր նշանակություն է տրվում մեր ժողովրդի մեջ խմբական երգեցողությունը ներարկելու հարցերին: Ընդամենը տասնամյա գոյություն ընթացքում այդ դպրոցը ծանրակշիռ

աշխատանք է կատարել մասնավորապես իր փոքրիկ սաների ձայնի պահպանման ասպարեզում:

Ընկերությունը մեծ տեղ տալով մանկական ձայնի պահպանման և երեխաների երգեցողական կարողությունների զարգացմանը, սրանից 14 տարի առաջ հիմնադրեց մանկական երգչախումբ-ստուդիա: Գործի նախաձեռնողներից մեկն էր ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, սովետահայ խմբերգային արվեստի ակադեմիկոս ներկայացուցիչ Մարտին Մազմանյանը: Իր գոյություն ընթացքում ստուդիան տվել է 100-ից ավելի շրջանավարտ-երեխաներ, որոնցից շատերը հաջողությամբ շարունակել են իրենց մասնագիտացումը երաժշտական ուսումնական հաստատություններում, իսկ մի մասն աշխատում է տարբեր երգչախմբերում: Ստուդիայի աշակերտների թիվն այժմ մոտավորապես 300 է: Հետագա տարիներին նույնպիսի երգչախումբ-ստուդիաներ բացվեցին ընկերության մյուս բաժանմունքներում՝ Լենինականում, Կիրովականում, Դիլիջանում, Հոկտեմբերյանում, Ղափանում: Հայաստանի երգչախմբային ընկերության մանկական երգչախումբ-ստուդիաներում ընդգրկված երեխաների ընդհանուր թիվն այժմ հասնում է 520-ի: Ընկերության բոլոր ստուդիաներն առաջնորդվում են երաժշտական 7-ամյա դպրոցի ծրագրով, բացի դրանից անցնում են նաև անհատական ձայնադրում: Իսկ բարձր դասարաններում ստանում են նաև խմբավարական գիտելիքներ: Այդ աշխատանքի արգասիքն է նաև այն փաստը, որ ընկերության Ղափանի բաժանմունքի մանկական ստուդիայի երգչախումբն արժանացավ Համամիութենական հեռուստատեսության ուշադրությանը, ներկայացվեց որպես մեր երկրի լավագույն կոլեկտիվներից մեկը:

Ընկերության վարչության առընթեր մանկական ստուդիայի սաները ընդգրկված են նաև մեծերի և փոքրերի երգչախմբերում: Մեծ երգչախումբը (ղեկավար՝ է. էլբակյան) ակտիվորեն մասնակցում է մանկական երաժշտական շաբաթի աշխատանքներին, պարբերաբար հանդես գալիս համերգներով նաև դպրոցականների ֆիլհարմոնիայի համերգներին: Կատարողական լայն գործունեություն են ծավալում նաև մեր մի քանի բաժանմունքների ստուդիաների երգչախմբերը: Այսուհանդերձ հարկավոր է ավելի ընդլայն-



Հանրապետության մի խումբ խմբավարներ Լենինգրադում

նել այս բեղմնավոր ու խոստումնալից գործը, ընդգրկել նաև մեր բոլոր բաժանմունքները:

Պատշաճ բարձրության վրա են գտնվում ընկերության անդամների նաև գեղարվեստական դաստիարակության խնդիրները: Ընկերության անդամները, ինչպես նաև ընկերության հետ այս կամ այն կերպ առնչվող խմբավարները մեկնել են Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա, Չեխոսլովակիա, որտեղ նրանք հնարավորություն են ստացել ծանոթանալու տեղի առաջատար երգչախմբերի գործունեությանը:

Միությունից դուրս գործուղումների են մեկնել նաև մեր լավագույն ինքնագործ երգչախմբերը:

Ընկերությունը նշանակալից աշխատանք է կատարել պրոֆեսիոնալ և ինքնագործ երգչախմբերի երգացանկի հարստացման, նոր խմբերգերի ստեղծման ուղղությամբ: Համարյա ամեն տարի անց են կացվել լավագույն խմբերգերի և մեններգերի մրցանակաբաշխություններ: Խմբերգեր են ձեռք բերվել նաև անհատական պատվերների միջոցով: Երկու և կես

տասնամյակի ընթացքում ընկերության միջոցներով ստեղծված խմբերգերի քանակն անցնում է երկու հարյուրից:

Անցած 25 տարիների ընթացքում ընկերությունը հրատարակել է մանկական խմբերգերի մեկ ժողովածու, սովետահայ կոմպոզիտորների խմբերգերի մեկ ժողովածու, Մ. Մազմանյանի, Կ. Զաքարյանի ժողովածուները, որոնց կազմողները իրենք՝ հեղինակներն են, ինչպես և Ք. Կարակազմողները իրենք՝ հեղինակներն են (կազմող Ռ. Աթայան):

Ընկերությունը հրատարակել է մեթոդական երկու ձեռնարկ, 15 անուն մենագրություն՝ նվիրված խմբերգային արվեստի երախտավորներ Արամ Տեր-Հովհաննիսյանի, Թաթուլ Ալթունյանի, Մարտին Մազմանյանի, Կարո Զաքարյանի, Կարո Կարապետյանի, Երվանդ Սահառունու, էգուարդ Կըզարթմյանի, Միքայել Միրզոյանի, Գուրգեն Միրզոյանի, Դանիել Ղազարյանի, Ազատ Մանուկյանի, Սամսոն Գասպարյանի, Ստեփան Դեմուրյանի կյանքին ու գործունեությանը:

Թաթուլ Ալթունյանի 80-ամյակի կապակցությամբ, ընկերությունը հրատարակեց «Ժամանակակիցները Ալթունյանի մասին» ալբոմ-ժողովածուն:

Նույնպիսի ալբոմներ են նվիրված Արամ Տեր-Հովհաննիսյանին, Կոնստանտին Սարաջևին (կազմող վլ. Խալան): Ընկերությունը նպաստել է նաև Թաթուլ Ալթունյանի ժողովրդական երգերի մշակումների ժողովածուի հրատարակման գործին, հրատարակվել է Երգի-պարի վաստակավոր անսամբլի գործունեությունը լուսաբանող գիրք՝ Հ. Խանդյանի հեղինակությամբ: Հրատարակության է պատրաստվում Երգի-պարի անսամբլի 50-ամյակին նվիրված ալբոմ-մենագրություն:

Երգչախմբային ընկերությունը շի մոռացել իր մեծերին, խմբերգային արվեստին նրանց մատուցած ծառայությունները և պարբերաբար կազմակերպում է նրանց ստեղծագործական երեկոները: Մեծարման երեկոներ են նվիրվել ՀՍՍՀ ժողովրդական արտիստներ Մ. Մազմանյանին, Ա. Տեր-Ղևոնդյանին, հուշ երեկոներ՝ Կ. Զաքարյանին, Դ. Ղազարյանին:

1974 թ. ընկերությունը մեծ շուքով նշեց մեծատաղանթ Արամ Տեր-Հովհաննիսյանի ծննդյան 90-ամյակը: Դեռևս

1964 թ. ընկերությունը նշեց նրա 80-ամյակը, և նիհնգրադից նրան հատուկ հրավիրելով Երևան: Երեկոյին Արվեստի աշխատողների տունը լեփ-լեցուն էր Տեր-Հովհաննիսյանի արվեստի երկրպագուներով, խմբավարներով, երգիչներով, երաժշտասերներով, աշխատավորական տարբեր խավերի բազմաթիվ ներկայացուցիչներով: Երեկոյին իր մասնակցությունն էր բերել նաև Տեր-Հովհաննիսյանի լավագույն բարեկամ, ծերունագարդ Մարտիրոս Սարյանը: Երեկոն անցավ ջերմ, հուզիչ մթնոլորտում:

1981 թ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում անցկացվեց հանդիսավոր երեկո, նվիրված Ք. Ալթունյանի ծննդյան 80-ամյակին: Այդ կապակցությամբ խմբերգային արվեստի տան ճակատին տեղադրվեց Ալթունյանի դիմաքանդակը: Այդ նույն տեղում տեղադրվել է նաև Արամ Տեր-Հովհաննիսյանի դիմաքանդակը:

Տարբեր տարիների ընթացքում նշվել են Երևանի ուսուցչի տան երգչախմբի 40-ամյակը, ապա նաև՝ 50-ամյակը, Հայէլեկտրագործարանի տղամարդկանց երգչախմբի 10-ամյակը, Երևանի Բելինսկու անվան դպրոցի երգչախմբի 10-ամյակը, Երևանի համար 137 դպրոցի երգչախմբի 10-ամյակը, Կիրովականի երաժշտական ուսումնարանի երգչախմբի 20-ամյակը և այլն:

Ծննդյան և ստեղծագործական աշխատանքի նշանակալից տարեթվերի առիթով մեծարվել են խմբավարներ Հ. Վերանյանը, Կ. Բարոյանը, Օ. Սիրունյանը, Ս. Ստեփանյանը, Կ. Իշխանյանը, երգ երաժշտության ուսուցիչներ է. Արզումանյանը, Գ. Գասպարյանը, Մ. Դավթյանը և ուրիշներ: Երախտագիտության ու դրվատանքի արժանացան նրանց ծառայությունները խմբերգային արվեստի զարգացման, մանուկների գեղագիտական դաստիարակության ասպարեզում:

Հայաստանի երգչախմբային ընկերությունն իր գործունեությունը ծավալել է արտադրական ձեռնարկության շահույթների հաշվին, որն ընկերության տնօրինության տակ գործեց մինչև 1975 թվականը: Այդ շահույթները հնարավորություն ընձեռնեցին իրականացնելու ընկերության բոլոր նախաձեռնումները, նրա ծրագրած բոլոր միջոցառումները՝

կապված խմբերգային արվեստի զարգացման խնդիրների հետ:  
Ընկերությունն իր գոյությունն ընթացքում իրականացրել է մի շարք շինարարական աշխատանքներ, որոնք կարևոր նշանակություն ունեցան ստեղծագործական աշխատանքների առավել ծավալման համար:

Իրականացվեց Սայաթ-Նովա փողոցի վրա գտնվող շենքի կառուցումը, ուր տեղավորվեցին ընկերության վարչությունն ու խմբերգային արվեստի տունը՝ իր 270 տեղանոց համերգասրահով, փորձասենյակներով, աշխատասենյակներով: Բնակելի հատվածում բնակարաններ ստացան ընկերության մեծ թվով անդամ խմբավարներ, երգիչներ, դիրիժորներ, տեսաբաններ և այլ գործիչներ: Ընկերության միջոցները ներդրվել են նաև այնպիսի կառույցների համար, ինչպես Կոմիտասի անվան համերգասրահը, Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի շենքը և այլն:

Մի քանի տարի առաջ շահագործման հանձնվեց Ընկերության Դիլիջանի բաժանմունքի շենքը՝ 250 տեղանոց համերգասրահով և այլ հարմարություններով: Այդ գողտրիկ շենքում ստեղծված են բոլոր պայմանները ինքնագործ խմբերի բաժանմունքների համար, որոնցից շատերը դեռևս ղուրկ են նվազագույն հարմարություններից:

Ցավոք սրտի, նույնը չի կարելի ասել մեր մյուս և տեղի մանկական երգչախումբ-ստուդիայի գործունեության մասին:

Ընկերությունը, համաձայն իր կանոնադրության, անց է կացրել վեց համագումար, 29-պլենում, որոնցից 6-ը՝ արտագնա: Ըստ պահանջվող ժամկետների, կոնֆերանսներ են անցկացվել բոլոր բաժանմունքներում:

Ընկերության վարչության ներսում գործել են մանկական երգչախմբերի, ինքնագործ երգչախմբերի, երգի-պարի անսամբլների, ստեղծագործական-հրատարակչական և այլ ժանրի սեկցիաներ, որոնց աշխատանքները հաջողությամբ ղեկավարում են Մ. Մաղմանյանը, Զ. Գյոզալյանը, Ռ. Աթաբեյանը, Ս. Տեր-Ղազարյանը, Է. Էլբակյանը: Ակտիվ աշխատանք են կատարում նաև համապատասխան սեկցիաների անդամները:

Ինչպես նշվեց գրքի սկզբում, ներկա վիճակով ընկերու-



Հայաստանի երգչախմբային ընկերության 25-ամյակին նվիրված հան-  
դիսավոր պլենում: Նախագահությունում են՝ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի  
նախագահի տեղակալ ընկ. Ս. Ս. Ավետիսյանը, ՀՍՍՀ կուլտուրայի մի-  
նիստրի տեղակալ ընկ. Ս. Ն. Մեֆինյանը, ՌՍՖՍՀ-ի երգչախմբային ըն-  
կերության նախագահ ընկ. Ն. Կառուզովը, Վրաստանի երաժշտա-խորեո-  
գրաֆիկ ընկերության նախագահ ընկ. Օ. Մ. Գորդելին

Թյունը հանրապետության շրջաններում և քաղաքներում ունի  
9 բաժանմունք, որոնք տեղերում ակնառու աշխատանք են  
կատարում խմբական երգարվեստի զարգացման նպատա-  
կով: Այս կապակցությամբ դրվատանքի ջերմ խոսքերի են  
են արժանի ընկերության Կիրովականի (նախագահ՝ Լ. Մկրտ-  
չյան, քարտուղար՝ Օ. Սիրունյան), Լենինականի (նախագահ՝  
ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Ա. Շիշ-  
յան, Դիլիջանի (նախագահ՝ Ժ. Ամյան, քարտուղար՝ Ս. Գրի-  
գորյան), Ղափանի (նախագահ՝ Ա. Բալասանյան, քարտուղար՝  
Ա. Բալայան), Աբտաշատի (պատասխանատու, քարտուղար՝  
Ս. Դավթյան): բաժանմունքները՝ նրանց անբասիր աշխա-  
տանքի համար: Գնահատելի են նաև ընկերության մյուս բա-  
ժանմունքների ղեկավարները, որոնք իրենց կարողությունները  
չեն խնայում խմբերգային արվեստի զարգացման գործին  
նպաստելու համար:

25 տարի շարունակ Ընկերության աշխատանքներին

իրենց նպաստավոր մասնակցությունն են բերել ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Մ. Մազմանյանը, արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ռ. Աթայանը, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ա. Տոնիկյանը, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Գ. Արմենյանը, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Զ. Գյոզալյանը, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ն. Սնկրյանը, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Ալվազյանը և շատ ուրիշներ: Նրանք իրապես, եղել են արժանավոր գործընկերներ, խորհրդատուներ, օգնականներ, իրենց սուղ ժամանակը անշահախնդրորեն տրամադրելով մեր ընդհանուր գործին:

Մոտավորապես 14 տարի Ընկերության աշխատանքները զլխավորեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Թաթուլ Ալթունյանը: Նա իր ողջ կարողությունները նվիրաբերեց իր սիրած արվեստին, անգնահատելի դեր խաղաց հանրապետության խմբերգային արվեստի զարգացման գործում:

Ընկերության վերջին համագումարում նախագահության կազմը համալրվեց միջին սերնդի ներկայացուցիչներով: Նրանք իրենց երիտասարդական ավյունը սիրով ներդնում են մեր ընդհանուր գործին:

